



ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Ե Ս

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ. 1911

ՅՈՒԼԻՍ—ՕԳՈՍՏՈՍ

ԹԻԻ 7-8

Չ Ե Թ Ը Բ Թ Ը Ն¹⁾

(ՏՈՒՄ ԵՐԵՎ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ)

ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՆՏՐԵՏ ՏԸ ՎԻՆԵԻ

ԱՆՁԻՆՔ

Ձեքըրթըն

Քուեյթը մը

Քիթթի Պեյ

Ճօն Պեյ

Լորս Պեյֆորս (Լօնտոնի քաղաքապետ)

Լորս Թեյպը

Լորս Լաուսթրեյ

Լորս Քինկսթըն

Կրուճ 2) մը

Բանուոր մը

Ռաշէլ, Քիթթի Պեյի աղջիկը, վեց տարեկան

Իր եղբայրը, չորս տարեկան

Նրեք դեռատի լուրտը

Ճօն Պեյի գործարանէն չորս բանուոր

Քաղաքապետին ծառաները

Ճօն Պեյի ծառաներ

Կրուճ մը

Տեսարանը կ'անցնի Լանտոն, 1770ին

1) Նյուայի պաշտօնի բանաստեղծին այս տոմարը՝ ֆրանսական ռումանթիկ թատրոնի գլխավոր անուններէն փափուկ և ամենէն ազդեցիկներէն է, ու մին՝ բոլոր գրականութեանց ամենէն մաքուր, ամենէն յուզիչ:

Քիլաւոր դերակատարներուն նկարագիրն ու հազուայքը:

ՁԵՔՐԹԸՆ. ՆԿԱՐԱԳԻՐ. — Տասնութը արեւմտեան երեսասարդ, ծոցոյն, դէմք կտրուի, մարմինը սկաւ, նկարագրէն ու մտածումէն՝ ուժասպառ, ձեւերուն մէջ պարզ ու միանգամայն վայելուչ, երկչոն ու զորովազին՝ Քիթթի Պեյի առջեւ, բարեկամական ու քաղի՝ Քուեյթին հետ, խոփոս՝ ուրիշներու հետ, եւ ամենուն հետ՝ զգուսաւոր. ծանրախոն ու խանդոս՝ շեռտն ու խոտաւածիմ մէջ:

ՀԱԿՈՒՅՏԸ. — Սեւ մեկնոց, սեւ ներմակ, գորս ծաբաս, կակուղ կօշիկ. մազերը քուշ, անփռի, Ինչ մը անկարգ քափքփած. Երեւոյ մը միանգամայն զինուորական ու եկեղեցական:

ՔԻԹԹԻ ՊԵՅ. ՆԿԱՐԱԳԻՐ. — Մօտ քսաներկու տարեկան կին, մկամադիկ, շոտրալի, վաշխուչ՝ աւելի ի բնէ րոտ դասիարակութեամբ, քաւուղ, կրօնատէր, ձեւերուն մէջ երկչոն, իր ամուսնոյն առջեւ դողաւոր, համարձակ եւ ինքնամտանոյ՝ միմիայն իր մայրական սիրոյն մէջ: Ձեքըրթընի համար իր գրութիւնը սիրոյ պիտի փոխուի, ինքն իսկ կը զգայ գաղղ, ու կը սարսափ. զգուսաւորութիւնը զոր ինքն իրեն կը պարտադրէ՝ առօր աւելի եւս մեծ չափ մը

ամենէն վաճ՝ հրաշակեղաններէն: Ձեքըրթըն երեւակայական անձ մը չէ, այլ անգլիացի բանաստեղծ մը մէջ իրապէս զոյլութիւն ունեցած է, ապրած՝ ժէ դարու վերջերը և թուառութենէն յուսահատ՝ անձնապաշտութեամբ կեանքին վերջ տուած. բայց Վինիի, իրականութենէն փոխ առնելով այդ աղեկաբար զէպրը՝ անով հիւսած է ողբերգութիւն մը, ուր՝ մարդկային ճակատագրին ամենէն մռայլ, ամենէն խորին ու անաւոր ու յափտեանական հարցերէն ոմանց հոգեւոր առեղծուածը ցցած է խորհող մարդուն հանդէպ, առեղծուած, որ թերեւ լուծում չունի, բայց որուն խորը սուղիւր, որուն միտքովեմբը սառապիլը՝ միշտ պիտի ըլլայ լեղի և արի հաճոյք մը վէճ հոգիներուն համար:

2) Դեռատի սպասար:

կը ստանայ: Ամեն ինչ պէ՛տ է ցոյց տալ, ե՛նոր տեսարանի վրայ երեւցած առաջին պահէն իսկ, թէ անակնկալ զաւթը եւ յանկարծակեան տոպոյս մը կրճան գէթիկա՛յն պէտքապէս մեղմեցնէ:

ՀԱԿՈՒՍՏԸ. — Մեւ թափէ՛ գլխարկ, «ալա Փամբա» կոչուած տեսակէն, երկար օրջագեւտ, գործ մեղմեցնէ սեւ ժապակէներ. երկար գանգոյր մաղէր, որոնց պարուրման խոպրակները կտրծոյն վրայ կը ծածանցնէ:

ՔՈՒՆԵՅՔԸ. ԿԱՐԱԳԻՐ. — Ուրտուն տարեկան տունի, մարմնով ու հոգեով առողջ եւ առողջ, կարծիք մէջ՝ կտրվի եւ ետանդուն, զինքը օրջապատողներուն հանդէպ՝ լի հայրական բարոյեանքով, անոնց վրայ լուեկայն հսկելով եւ զանոնք առաջնորդելով՝ առանց զանոնք միտաւորելու ուղեղն. նեղմաբան եւ մարգասեաց՝ երբ կը տեսնէ մարդկային քնկերութեան թերութիւնները. քնկերութեան դէմ զայրացած՝ իսկ իւրամանկիւր մասնաւոր մարդոյ տեսարաններով, իր խայթիկ տրամաբանը իր կիր կ'արկանէ. այն առեւն միայն երբ տրամաբանը կը սիրապետէ իրեն իր նայաւորը տարապիսեան է, բայց ինք կը կողմէ ոչինչ տեսած ըլլալ՝ որպէս զի կարեւոր իր վարմունքին իմնագլուխ տեսնալ. տանը բարեկամ եւ բոլոր պարագանքովեանց կատարման եւ կարգաւորութեան ու խաղաղութեան պահպանման մասը ուսուցիչ ըլլալով, իւրամանկիւր ոք ներմայալէն զինքը էլ ինքզինքն իր իր հոգեւոր ու կեանքին ղեկավար:

ՀԱԿՈՒՍՏԸ. — Մեկնոց, ներմակ, երկար գլուխով՝ կաղիմի գլուխ՝ բաց թուխ, կամ գործ, մեծ բարձր լայնեղ գլխարկ, ներմակ մաղեր տափակ եւ վար կախուած:

ՃՈՆ ՊԵԼ. ԿԱՐԱԳԻՐ. — Քառասունընթաց-իստուն տարեկան, հոսովու, դէմը կարմիր, էլլով, փորքոյր եւ ռոպիլիմով ուսած. իր նայաւորին մէջ զի կ'ունի իր հարստութեանը ամբարտաւանքները. նայաւորը կասկածոտ, իշխող. միայն եւ յաջողութեան, ձեւերուն մէջ բիրտ, եւ ամբողջ մէկ ձեւորման ու ամեն մէկ բանին իր սիրտիցն զգացողով:

ՀԱԿՈՒՍՏԸ. — Տափակ մաղեր՝ անփոփոխ լայն: եւ պարզ բխողով մեկնոց:

ԼՈՐՏ ՊԵՔՈՐՏ. ԿԱՐԱԳԻՐ. — Հարուստ, երկու գլուխով ծերունի, ամբիտ հովանաւորողի տեսքով, գոռոզ, իմնագոռ տաքեր՝ աստղագործեալ փողկապի մը վրայ զգաւորուած, հաստաւուն ու վեհաւոր բալուած մը: Հարստութեան հանդէպ՝ յարգալից, աղատութեան հանդէպ աւրաւոր մարմնոտ:

ՀԱԿՈՒՍՏ. — Լորտ-հաղափայտի մանեակը վիզէն ի վեր մեկնոց, հաղափայտ ղիպակէ ներմակ, ոսկի զուլեմով մեծ ձեւաւորութեան:

ԼՈՐՏ ԹԵԼՊՈՐ. ԿԱՐԱԳԻՐ. — Անճանհան եւ սիւնգամայն բարեբաղուն, գուարք ընկեր, ձեւերով աշխարհ, ու եւ զանապուրտեան բեմամբ, եւ տառ ուրախ մանաւանդ երբ զերծ է ու եւ տեսնուած տեսարանէն եւ ու եւ լուրջ գոգոտ:

ՀԱԿՈՒՍՏԸ. — Կարմիր որսագլուխ, փառքներէն գոգի, մորթ անգրաւարեթի, մազերը քերտուրէն փոքեցան, խոտոր տեսնող սեւ. Դաւթի, ցրեղուն:

Արարուած Առաջին

Տեսարանը կը ներկայացնէ ընդարձակ յարկաւորութեան մը ճոճ Պէշի տան ու հանգստեան ներս-ստիւանքով: Հանդիսանալիս ձախ կողմը շրմինէն մը՝ վառած գէնատիւրով շեջուն: Աջ կողմը, Բիթթի Պէշի ննջատեանի տունը: Խորը, ապակեւոր մեծ դուռ մը. ապակիի փոփոխ փառքներէն ներսէն մեզին՝ կը նշարարէ ձախ խանութ մը. մեծ դարձադարձիկ սանդուղ մը կ'առաջնորդէ շատ մը ննջ եւ մութ դռներու, որոնց մէջ կը գտնուի Զեքրարներէ փոփոխ սեւեւեւիկ տունը:

Բուէյթը 1) սեւեւեւիկ մէկ անկիւնը. ձախ կողմը. ցիւր մը կը կարգայ: Աջ կողմը՝ նստած է Բիթթի Պէշ. իր ոտքին տակ՝ տղեկ մը՝ արդուակի մը վրայ նստած, փոքր, աղջիկ մը՝ կանգուն:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա.

Բուէյթը 1, Բիթթի Պէշ, Ռաշի

Բիթթի Պէշ. — (Իր աղջկանը որ դիւր մը ցոյց կուտայ իր եղբորը, Կարծես՝ ամուսնոյն ձայնն է որ կ'իմանամ: Կարծես մի ընէք, տղաք:

(Բուէյթը 1)

Արդեօք ինչ կայ նորէն:

(Բուէյթը 1 ուսերը կը թօթիկէ):

Տէր Աստուած: Հարեմբիդ բարկացած է: Տառապան չկայ, շատ բարկացած կ'երեւայ: ձայնին շեշտէն յայտնի է: Կ'աղաւթմ, Ռաշի, մի՛ խաղաղ (Զեքարդը կը ձգէ եւ մտիկ կ'ընէ) Կարծես թէ հանդարտեցաւ: Այնպէս չէ, պարտն:

(Բուէյթը 1 հաստատական նշան մը կ'ընէ եւ ընթերցումը կը շարունակէ):

Եւ ի՞նչ փոքրիկ մանեակ մի՛ փորձեր, Ռաշի: Ատոնք աշխարհային սնտոյ բաներ են որոնց միջեւ անգամ պէտք է որ դպիւնք: Բայց ո՞վ առաւ քեզի այդ փորձը: Աստուածաշունչ մըն է: Ո՞վ առաւ քեզի, ըսէ տեսնեմ: Ապահով մի՛ որ սա երիտաւորն է որ երեք ամէս ի վեր հոս կը բնակի:

Ռաշի. — Այո, մայրիկ:

Ք. Պէշ. — Այո, Աստուած իմ, ինչ անգլայի բան եւ ընթերցում, աղջիկ: Ես քեզի պատուիրած էի

1) Այսպէս կը կոչուին Անգլիոյ եւ Ամերիկայի մէջ տարածուած կրօնական աղանդի մը աղանդները:

որ սշինչ պէտք է ընդունիս, մանաւանդ այդ խեղճ երիտասարդէն : Ե՛րբ տեսար զայն, զաւակս : Գիտեմ՝ որ այս առտու գաղիք՝ եղբօրդ հետ՝ իր սենեակը, զինքը համբուրելու : Ինչո՞ւ իր սենեակը մտաք, զաւակներս : Ընկառաշա՞նք բան էր բրածնիդ :

(Կը համբուրէ զաւակները)

Վստաջ եմ որ դեռ գրելու վրայ էր երբ ներս մտաք. երէկ իրիկուընէ մինչև այս առտու իր կան-թեղը վառ մնացած էր :

Ը-Ն. — Այն. և կուզեմ կոր :

Ք. Պէ՛ւ. — Կուզեմ կոր : Մոռա, սո՛ւս եղէք : Մարդու մի՛ ըսէք ամուսկս : Այդ գիրքը պէտք է տանիք Պ. Քոմիյն յանձնէք՝ երբ ձեզ կանչէ : Բայց զինքը երբէք մի՛ խանդարեք ասկից ետքը, և իրմէ՛ սշ մէկ նուէր մի՛ ընդունիք : Երեք ամիս է որ այս-տեղ կը բնակի, բայց դեռ մէկ անգամ մը չեմ խօսած իրեն հետ, և դուք իրմէ նուէր մը, գիրք մը ընդունած էք . . . Ամօթ չէ՛ : Գացե՛ք համբուրեցեք բարի Քուէյքըրը. լաւագոյն բարեկեանքն է ան զոր Աստուած մեղի տաւած ըլլայ երբէք :

(Տղաքը կը վազեն Քուէյքըրին ծուկներուն վրայ կը նստին) :

Ք-Եղբայր. — Մոռնկերուս վրայ նստեցեք, և աղէկ մտիկ ըրէք ըսածիս : Պիտի ըսէք ձեր ազնիւ մայրիկին, թէ իր սիրտը պարզ է, մաքուր է ճշ-մարտապէս քրիստոնեայ, բայց թէ իր վարմունքին մէջ ձենէ աւելի աղայ է, թէ ձեզի քէլ մը առաջ տուած պատուէրին վրայ պէտք եղածին չափ չէ մտածած, և թէ կը խնդրեմ իրմէն որ ըմբռնէ թէ աղբատի մը նուէրը ետ դարձնելը՝ զայն վիրաւո-րել և իր ամբողջ թշուառութիւնը իրեն զգացնել ըսել է :

Ք. Պէ՛ւ. — (Նստած տեղէն ցատքելով) Օ՛հ, իրաւունք ունի : Տո՛ւր, տո՛ւր ինծի այդ գիրքը, աղ-ջիկս, պէտք է մինչև մահերնիս զոյն պահանք : Մխալեցայ, զաւակս : Մեր բարեկամը մի՛շտ իրա-ւունք ունի :

Ք-Եղբայր. — (Ծուգուած, և Քիթթի Պէլէ ձեռքը համբուրելով) Ա՛հ, Քիթթի Պէլ, Քիթթի Պէլ, պարզ ու աշխոյժ հոգի : Այդպէս մի՛ ըսե՛ր ինծի համար : Մարդկային իմաստութիւնը գոյութիւն չունի : Տես, ըսածս ճիշդ է հիմամբ, բայց ըսելու ձեւս աղէկ չէր : Պէտք չէր որ զաւակներուդ զգացնէի իրենց մօրը թէթև սխալը : Ձկնայ, Քիթթի Պէլ, չկայ մտածում մը, նոյն իսկականէն գեղեցիկ մտածումը, որմէ գերազանց ըլլաւ Քու. եռանդոտ սրտիդ մէկ մղումը,

քու գորովութեամբ համեստ հոգիիդ մէկ հառաչանքը :
(Մենազօշ ձայն մը կը ցուի)

Ք. Պէ՛ւ. (Մարափած). — Օ՛հ, Աստուած իմ, հայրերնուն ձայնն է. նորէն բարկացած է : (Ձեռքը սրտին կը տանի) Ծուշու կը կարի : Այս ձայնը սիրտս կը փրցնէ : Ի՛նչ ունի նորէն : Երէկ իրիկուան պէս՝ դարձեալ բարկացած կ'երեւայ :

(Քիթթի Պէլ վրայ կ'իջնայ) :

Ոտքերս կը կտրին : Կարծես փոթորիկ մըն է որ կուգայ : Ու բոլոր փոթորիկները իմ խեղճ սրտիս վրայ կը յարձակին :

Ք-Եղբայր. — Ա՛հ, դիտեմ թէ ի՞նչ է զլիսուորիդ արիւնը զուլին հանաւոր. վէճ մը ունի իր գործարա-նին բանտրներուն հետ. դեռ նոր իրեն դրկած են՝ նորթնէն Լոնտոն՝ պատգամաւորութիւն մը, խնդրե-լու համար որ ներէ իրենց ընկերներէն մէկուն : Բեղձերը պարագ սեղոյ փարսախ մը ոտքով եկած են : Դուրս ելէք, գացե՛ք, երեքդ ալ : Դուք անօգուտ էք հոս : Այդ մարդը ձեզ պիտի սպաննէ : Տեսա՛լ մը անգղ է, որ իր բռնը կը փչըն . . .

(Քիթթի Պէլ դուրս կ'ելլէ, ձեռքը սրտին վրայ, կը ընձած՝ զլիսուն իր որդւոյն, զոր դուրս կը տանի Ռաշէլին հետ) :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ

Քուէյքըր. ձօն Պէլ, խումբ մը բանտրներ

Ք-Եղբայր. (Դիտելով ձօն Պէլը որ ներս կը մտնէ) — Կատարած կ'երեւայ . . . Ահա հարուստ մարդը, եր-ջանիկ շահագործողը. ահա գերազանց ետականը, արդար՝ ըստ օրէնքին :

ձօն Պէլ (Գործաւորներուն բարկութեամբ).

(Բանտ գործաւորներ լսելի իր ետեւէն կուգան և դրան անջև կը կենան)

Ձէ, չէ, չէ, չէ : Աւելի պիտի աշխատեք. այսքան : Գործ-ար ղ (Իր ընկերներուն) . — Ու նուազ պիտի շահիք. այսքան :

ձօն Պէլ. — Եթէ գիտնալի թէ ո՞վ է այս պատա-խանք տուողը, ան ալ ճամբու կը դնէի՝ միտան պէս : Ք-Եղբայր. — Աղէկ բարի, ձօն Պէլ : Չօյակապ ես՝ ձիւդ ինչպէս վեհապետ մը իր հպատակներուն մէջ :

ձ. Պէլ. — Դուն Քուէյքըր մըն ես, ըսածիդ ականջ չեմ կախեր, բայց եթէ գիտնալի թէ սըռնոյմէ ո՞րն է որ այդ խօսքն ըսաւ . . . Ա՛հ, այդ խօսքն ըսող անօրէնը . . . Միտքերնիդ չէ ո՞ր ես ալ ձեզի պէս գործաւոր մըն էի : Ի նչպէս ձեռք ձգեցի այս ամ-բողջ հարստութիւնը : Կը կարծեք որ մեկ օրէն

ՃԼՔ ՊԵԼ. — Եղածը եղած է: Ինչո՞ւ ինձի պէս չեն վարուել: Թող իրենց ընտանիքին բոլոր անդամները աշխատին և բանի մը օգտակար ըլլան: Միթէ ես կնիկս չեմ՝ աշխատցնել: Երբեք չ'երևար, բայց այստեղ է ամբողջ օրը, և աչքերը թէպէտ միշտ գետինը կը ծռէ, գիտէ գանձնէ գործածել, ու շարունակ կ'աշխատի: Հակառակ Լոնտոնի շուրջն ունեցած աշխատանցներուս ու գործարաններուս, կ'ուզեմ որ իր սենեակին խորէն շարունակէ վարել այս հանգստանոցը, ուր կուզան յորտեքը, Խորհրդարանէն, որսորդութենէ կամ Հայտ-Փարբէն դառնալուն: Այդպէսով լաւ յարաբերութիւններ կը շահիմ, որոնցմէ յետոյ՝ պէտք եղած օգուտը կը քաղեմ, Թօպի ճարպիկ բանւոր մըն էր, բայց անհնաւանդ ճշմարիտ հաշուող մը թոյլ չի տար որ իր շուրջը ու է բան անօգուտ մնայ: Ամէն բան, կենդանի կամ անկենդան, պէտք է շահ մը բերէ: Հողը արգասաւոր է, դրամն ալ բերուուն է, և ժամանակը դրամ էր բերէ: Արգ՝ կնիքն ալ ամզի պէս տարիներ ունին ապրելու. ուրեմն ձգել որ այդ ժամանակը անօգուտ անցնի, լաւ եկամուտ մը կորսնցնել ըսել է: Թօպի ձգեց որ իր կնիքն ու աղջկները ծոյլ մնան. աստիկա մեծ դժբաղդութիւն մըն է իւրեան համար. ասորը պատահանաւոր է չեմ ես:

ԲՈՒՆԵՂ. — Մերենաներէդ մէկուն մէջ այդ խեղճը թե՛ք կտորեց:

Ճ. ՊԵԼ. — Այո, և նոյն իսկ մերենան ալ կտորեց:

ԲՈՒՆԵՂ. — Վստահ եմ որ դուն ներքնապէս աւելի կը ցաւիս երկաթէ զսպանակին քան մսէ և արիւնէ զսպանակին վրայ: Բաւ սիրտդ պողպատէ է՝ մերենաներուդ պէս: Մարդկային ընկերութիւնը քու սրտիդ պէս պիտի ըլլայ. իրեն Աստուած պիտի ընէ ոսկիի կոյտ մը: Եւ իրեն քահանայապետ՝ Հրեայ վաշխառու մը: Բայց յանցանքը քուդ չէ. դուն ինչ որ տեսած ես աշխարհ եկած ատենդ՝ անոր համեմատ կը վարուիս. քեզ չեմ մեղադրեր. դուն տրամաբանական ես, ատ ալ հազարաւոր յատկութիւն մըն է: Միայն թէ՛ քանի որ չես ուզեր որ խօսիմ, գոնէ ձգէ որ կարդամ: (Գիրքը նորէն ձեռքը կ'առնէ և թիկնաթուռին մէջ՝ անդին կը դառնայ):

ՃԼՔ ՊԵԼ. (Իր կնոջ սենեակին դուռը կը բանայ ու ծոյլ) — Տիկին Պէլ, եկուր հոս:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ

Նոյնք, Բիթթի Պէլ

(Բիթթի Պէլ, սարսափահար, բռնած իր երկու զաւակներուն ձեռքէն, որոնք՝ Հօրերուուն վախէն՝

իրենց մօր ըրջագգետնին մէջ կը պահուէին) — Եկա՛յ: ՃԼՔ ՊԵԼ. — Ո՛ր է երեկուան հաշիւը, պատրաստներ ես: Սա վերը բնակող երիտասարդը Թոմ կամ Թոմասէն ուրիշ անուան չունի. . . Կը յուսամ որ շուտով կ'իյլի կ'երթայ:

Բ. ՊԵԼ. (Սեղանին վրայէն արձանագրութեան տետր մը կ'առնէ և կը բերէ ամուսնոյն) — Մեր տետրակին վրայ միմիայն այդ անունը գրեց՝ այդ փոքրիկ սենեակը վարձած ատենը: Ահա երեկուան հաշիւը՝ վերջին ամիսներու հաշիւին հետ:

Ճ. ՊԵԼ. (Հաշիւները կը քննէ՝ արձանագրութեան տետրին վրայէն). — Քաթրին. առաջուան չափ ճիշդ չես բռներ կոր հաշիւը. . . (Ինքզինքն խօսքը և կասկածոտ ձևով մը կնոջը երեսն ի վեր կը նայի): Ինչո՞ւ այդ Թոմը ամբողջ գիշերը արթուն կը մնայ. խելքս չի հասնիր. . . Շատ աղքատ կ'երևայ: (Տետրակը նորէն աչքէ կ'անցնէ):

Առաջուան պէս ճիշդ չես բռներ կոր հաշիւը. հասկցա՛ր:

Բ. ՊԵԼ. — Ատուռած իմ, ինչո՞ւ այդպէս կ'ըսես:

Ճ. ՊԵԼ. — Ձեռ գուշակեր թէ ինչո՞ւ այսպէս կ'ըսեմ:

Բ. ՊԵԼ. — Արդեօք թուանշանները դէ՛ռ շատուած են:

Ճ. ՊԵԼ. — Է՛ն անկեղծը խորամանկութիւն կը դնէ տմէն բանի մէջ. Ձեռ կրնար շխտակ պատասխանել և աչքիս մէջը նայի:

Բ. ՊԵԼ. — Բայց վերջապէս ի՞նչ կը գտնես հոս՝ որ քեզ կը բարկացնէ:

Ճ. ՊԵԼ. — Ձգտածս է որ զիս կը բարկացնէ, և չգտնելս շատ կը դարմացնէ զիս. . .

Բ. ՊԵԼ. (Շուտաւ) — Պէտք է աղէկ մընայիլ, չեմ գիտեր ինչ է պակասը:

Ճ. ՊԵԼ. — Հինգ վեց ոսկի կը պակսի. աչք մը միայն նետոյցի, բայց ապահով եմ:

Բ. ՊԵԼ. — Բացառաբէ, ի՞նչ ըսել կ'ուզես:

Ճ. ՊԵԼ. (Թւէն բռնկով) — Գնա սենեակդ ու խելքդ գլուխդ ժողվէ: Տղաքը պարապ կենալու կը վարժուի կոր. չեմ ախորժիր: Տանս գործերը առաջուան պէս խնամքով չես նայիր կոր: Ռաշէին հարգուտը շատ տեղիքի է. չեմ ախորժիր:

(Ռաշէ կը վազէ Գուէլլերին սրունքներուն մէջ տեղը կը նետուի. Ճոն Պէլ կը շարունակէ խօսիլ Բիթթի Պէլին որ իր ննջանքները մտած է արդէն) Գնա, հիմա կուգամ ես ալ. այս սրնակը նորէն սկսե և եօթնով բազմապատկէ: (Բիթթի Պէլին ետեւէն կը մտնէ անոր սենեակը):

Տ Ե Ս Ս Դ Ն Ն Դ

Քուէյրեր. Ռաշէյ. Ձեքըրթըն

Զէլլը.— (Համբուրդէ յետոյ Ռաշէյը որ վազելով իր մօրը կտալայ, Քուէյրերին ձեռքը կը սեղմէ). Քարէ, խստապահանջ բարեկամ:

Քուէյ.— Դեռ պէտք եղածին չափ ալ խստապահանջ չեմ իբր բարեկամ և իբր բժիշկ: Հոգիդ կը կրծէ կոր մարմինդ: Ձեռքերդ կրակներու մէջ են, ու երեսիդ վրայ գոյն չէ մնացեր: Այս կերպով՝ որչափ ատեն կը յուսաս որ պիտի ապրիս:

Զէլլը.— Կարելի եղածին չափ քիչ: Տիկին Պէյ այստեղ չէ:

Քուէյ.— Կենքդ ուրեմն մէկուն օգտակար չէ:

Զէլլը.— Ընդհակառակն, կեանքս ամենուն աչքին շատ կ'երևայ կոր:

Քուէյ.— Հաստատապէս կը հաւատամ այդ ըսածիդ:

Զէլլը.— Այնքան հաստատապէս որքան զուն կը հաւատաս քրիստոնէական ողորմածասիրութեան: (Դաւանութեամբ կը ժպտի):

Քուէյ.— Քանի տարեկան ես: Սիրող մաքուր ու թարմ է Ռաշէյին սրտին պէս, և բազմախորձ միտքդ այնքան ծեր է որքան իմ:

Զէլլը.— Վաղը տանքըւթը տարեկան պիտի ըլլամ:

Քուէյ.— Խեղճ տղայ:

Զէլլը.— Խեղճ, այո: Տղայ, ո՛չ... Ես հազար տարի ապրած եմ:

Քուէյ.— Հազար տարին իսկ բաւական չէ մարդոց մէջ գտնուած չարութեան կէսը ծաննայալու համար: Բայց թշուառութիւնը համայնագիտութիւն ընել է:

Զէլլը.— Ուրեմն ես շատ գիտուն եմ... Բայց կը կարծէի թէ տիկին Պէյ այստեղ էր: Քիչ մը առաջ նամակ մը գրեցի, նամակ մը զոր գրելը շատ ծանր եկաւ ինձի:

Քուէյ.— Կը վախճամ որ չափազանց բարի ես զուն: Ըսի քեզի որ զգուշութիւն ընես ատոր: Մարդիկ երկու մասի բաժնուած են, մարտիրոսներ և դաշիններ: Դուն միշտ ամենքէն պիտի մարտիրոսուիս, ինչպէս և մայրը սա աղջկան:

Զէլլը.— (Բուռն խոյանցով մը).— Մարդու մը բարութիւնը զինքը զո՛հ կը դարձնէ այնքան ատեն որքան ինքը կը կամենայ. և ազատումը իր ձեռքն է:

Քուէյ.— Ի՛նչ ըսել կ'ուզես:

Զէլլը.— (Համբուրդով Ռաշէյը, կ'ըսէ ամենամեղմ ձայնով).— Ինչո՞ւ վախճանեք այս փորձիկ աղջիկը... և մայրն ալ, որ մօտերնիս է ու կորով է լսել...

Քուէյ.— Մայրը չի կրնար քեզ լսել. անոր ականջին կը հնչէ հիմա ձայն մը շատ նուազ քաղցր քան քու ձայնդ (Սեկուսի) Այս երրորդ անգամն է որ էնոր խօսքը կ'ընէ...

Զէլլը.— (Կրթնելով այն թիկնաթուղի ուր նստած է Քուէյըրը).— Դուք միշտ կը կշտամբէք զիս, բայց ըսէ՛ք՝ խնդրե՛մ՝ ինչո՞ւ մարդ պէտք չէ իր նկարագրին ճամբուն հետևի, երբ ապահով է որ՝ խոնջէնքի րոպէն դալուն պէս՝ պիտի ստիպուի ձեզ քաշուի: Իմ մասիս, որդած եմ ու եւ զիմակ չընդունիլ ու մինչև վերջը մնալ ինչ որ եմ, ամէն պարագայի՝ մտիկ ընել սրտիս՝ իր գեղութիւնն ու իր զայրոյթնեւրուն մէջ, և իմ ճակատագիրս լաւ կատարելով համակերպիլ: Ի՛նչ օգուտ ունի խստաբարոյ ձևանալ, երբ մարդ ներդաժիտ է: Կեզձ խառութեանս տակ զթութեան ժպտման մը պիտի տեսնուէր, և չպիտի կրնայի գտնել քօղ մը որ թափանցիկ չլլար: Ամէն կողմէ կը դաւածանեն ինձի դէմ, կը զգամ, և կը ձգեմ որ խաբուիմ՝ արհամարհելով ինքզինքս, ու ինքնապաշտպանութիւնը ձանձրանալի նկատելով: Կան մարդիկ որոնց կը նախանձիմ, տեսնելով այն հաճոյքը զոր կը զգան՝ կուպիտ խորամանկութիւններով ինձի յաղթելով. կը տեսնեմ հեռուէն՝ այդ դաւերու թելերը հիւսնիս, և անքան անտարբեր եմ դարձած իմ կեանքիս նկատմամբ, որ չեմ զիջանիր գետին ծով՝ այդ թելերէն մէկ հատը փրցնելու համար: Արդէն իմ վրէժս բաւական լուծուած կը նկատեմ տեսնելով իրենց զձառութիւնը, որ զիս իմ աչքիս կը բարձրացնէ, և ինձի կը թուի թէ նախախնամութիւնը չի կրնար թոյլ տալ որ իրերը երկայն ատեն այս ընթացքով շարունակեն: Միթէ ան իր նպատակը չունէր զիս ստեղծելով: Իրականութեան մէջ անոր դէմ յոխորտալու՝ Բնութիւնը բարեփոխելու յաւակնութեամբ: Ինձի է ինկեր Աստուծոյ սխալը բռնել:

Քուէյ.— Քու մէջդ մշտական երազանքը սպանն էր զործելու կարողութիւնը:

Զէլլը.— Է՛, ինչ փոքր, եթէ այդ երազանքին մէկ ժամը անկի գործ կ'արտադրէ քան ուրիշներուն գործունէութեան քան օրը: Ի՞՞՞՞՞՞՞ կրնայ գաղտնաստան կտրել անոնց և իմ միջև: Մարդուն համար՝ միայն մարմնոյ աշխատութիւնը կայ միթէ. և ուղեղին աշխատութիւնը արժանի չէ քիչ մը զթութեան: Է՛,

Աստուած իմ, մտքի միակ աշխատութիւնը՝ միթէ թիւերու աշխատութիւնն է: Պիւթագորաս աշխարհիս աստուածն է: Պէտք է ուրեմն որ հրեղէն ներշնչու- մին՝ « Մի՛ գար, դուն անօգնու ես » ըսեմ:

Ք-աւչ. — Այլ ներշնչումը ճակատիդ վրայ դրոշմեր է իր տղետաւոր կնիքը: Ձեմ մեղադրեմ քեզ, գա- ւակա . բայց կ'ողբամ վրադ:

Չէ՛ր. (Կը նստի) — Բարի քուէյքըը, ձեր եղբայ- րական և ողեպաշտ ընկերութեան մէջ, գութ ունին անոնց վրայ որոնք մտածման հրաշքովը կը շար- չարուին: Այո՛ կարծեմ. ձեզ ներողամար կը գտնեմ ինծի համար, մինչդեռ ամենուն համար խիստ էք. աստի քիչ մը կը հանդարտեցնէ դիս:

(Այս միջոցին՝ Ռաշէլ կ'երթայ Ձէթըրթընի ծուռ- կերտն վրայ կը նստի):

Իրաւ է որ, երեք ամսէ թ վըր, գրեթէ երջանիկ եմ՝ այստեղ. անուսն չեն գիտեր հոս, իմ՝ վրաս չեն խօսիր ինծի, և ծուռկերուս վրայ ազուր տղկներ կը գտնենք:

Ք-աւչ. — Բարեկամ, կը սիրեմ քեզ՝ լուրջ նկա- րագրիդ համար: Դուն արժանի պիտի ըլլայիր մեր կրօնական գումարուփներուն մասնակցելու, որոնց մէջ պատկերապաշտ պապականներու իրարանցումը չի տեսնուիր, ու բողոքականներու տղայական եր- գերը չեն լսուիր: Կը սիրեմ քեզ, որովհետեւ կը դուշակեմ որ աշխարհ քեզ կ'առէ: Հայեցողական հոգի մը աւելորդ բռն մը կը թուի այն բոլոր գա- տարկապարտներուն որոնցմով երկիրս ծածկուած է երևակայութիւնն ու ամբողջութեամբ երկու հիւանդու- թիւներն են որոնց վրայ մէկը չի գթար: Դուն անուններն անգամ չես գիտեր այն գաղտնի թշնա- միներուն որոնք շուրջդ կը սլշտան. բայց դիտեմ որ անանկներ ալ կան որոնք քեզ անոր համար աւելի կ'առնեն որովհետեւ չեն ծանախար:

Չէ՛ր. (Եւսանդով) — Եւ սակայն, միթէ քիչ մը իրաւունք չունինք սիրուելու իմ եղբայրներէս, ես որ գիշեր ցորեկ անոնց համար կ'աշխատիմ. ես որ այնքան ստածանքով՝ աղգային աւերակներուն մէջէն բանաստեղծութեան քանի մը ծագիկ կը փնտռեմ որպէսզի անոնցմէ կարենամ տեսական անուշահա- տութիւն մը հանել. ես որ կ'ողբում մարգրիտ մը ևս աւելցնել Միզլիոյ թագին, և որ այնքան ծովերու և գետերու յատակը կը սուզեմ գայն գտնելու չ'ամար: (Ռաշէլ կը հեռայ Ձէթըրթընէն, կ'երթայ քուէյ- քըրին ոտքին տակ աթոռակի մը վրայ կը նստի և պատկերներ կը նայի:)

Եթէ գիտնայիք որքան կ'աշխատիմ... Սենեակը վանքի խցիկ մը դարձուցած եմ. կեսնքս օրհնած ու սրբապարծած եմ. տեսողութիւնս տկարացուցած եմ, աչքերս ալ ևս մեր տարիքին լոյսը չունին. սիրեա աւելի պարզ դրած եմ. իւրացուցած եմ՝ չին տառ- նուան մանկական բարբառը. կէս-սաքսոն ու կէս- փրանկ ոտանաւորներ դրած եմ, ինչպէս Հէրբլտ թագաւորը Ուիլիւմ դքսին. ու յետոյ, տասներորդ դարու այդ մուսան, այդ կրօնաշունչ մուսան արա- տուփի մը մէջ դրած եմ՝ սրբուհիի մը մասունքին պէս: Պիտի փշթելիս գայն, եթէ գիտնային որ իմ ձեռքովս է յորինուած. պաշտօնցին գայն իբր գործը վանականի մը՝ որ երեքք գրութիւն ունեցած չէ և դոր Ռաուլէ անուանած եմ:

Ք-աւչ. — Այո՛, մարդիկ կը սիրեն մուսաններն ապրեցնել և ողջերը մեռցնել:

Չէ՛ր. — Սակայն իմացան որ այդ գերբը ես եմ՝ գրած: Այլ չէին կրնար գայն քանդել, թողուցին որ ապրի. բայց ան քիչ մը աղմուկէ ուրիշ արդեւոք չբերաւ. ինծի, և ես զրկել ուրիշ բան չեմ կրնար ընել Ջանացի ամէն բանի ձկիլ. չ'աղոցեցայ: Որոշ աշ- խատանքներու խօսքն ըրին ինծի. փորձեցի, չկրցայ: Թող մարդիկ ներէն Աստուծոյ որ դիս այսպէս է ստեղծեր: Ուժի ծայրայեղութիւն է ասիակ թէ ամօ- թայի տկարութիւն, չեմ գիտեր, բայց երբեք չկրցայ նեղ ու կանխաւոր ջրանցքներու մէջ բան- տարկել մեծադուրդ յորդումները մոքելու, որ հակառակ իմ կամբին՝ իր ասիւնըը միշտ կ'ողողէր: Անկարող էի օրական հաշիւներու դանդաղ գործողութեանց հետևել. էն առաջ ատուցմէ հրաժարեցայ: Թողտա- վանեցայ որ միտքս յաղմուած էր թուանշանէն, և խորհեցայ մարմինս գործածել: Անաղ, բարեկանմ, հոտ ալ՝ ուրիշ ցու, ուրիշ նուաստացում. այս մար- միրը, տղայութիւնէս ի վեր անքան անցուցած դի- շերներուս կրակներէն ալքած մրկած, շատ տկար է ծովային կամ զինուորական աշխատութեանց համար. շատ տկար՝ նոյն իսկ ամենէն քիչ յոգնեցող արուեստագործութեան համար:

(Ավամայ յուզմունքով մը ոտքի կ'ելլէ): Եւ արդէն, նոյն իսկ եթէ Հերակլէտի ուժն ունե- նայի, իմ ու գործիս մէջտեղը միշտ պիտի գտնեի աղետաբեր թշնամին որ ինծի հետ ծնած է, չապա- գործ պարիկը որ անշուշտ օրօրոցիս մէջ երևան ելաւ, Մտաշածութիւնը, Բանաստեղծութիւնը: Ամէն տեղ է ան. ամէն բան կուտայ ինծի. և ամէն բան ձեռքէս կ'անէ. ամէն բան կը հրապուրէ և ամէն

բան կը ջնջէ ինծի համար. ան է որ զիս ազատեց ,
և ան է որ զիս խորտակեց . . .

Բռնէ. — Ո՛հ հիմա , ի՞նչ կ'ընես :

Զեմը. — Ի՛նչ գիտնամ : Կը գրեմ : Ինչո՞ւ . . . Հեմ՝
գիտեր : Որովհետեւ պէտք է . . .

(Կի՛նայ կը նստի աթոռին վրայ , և այլ ևս մտիկ
չ'ընէր քուէյքըրին պատասխանը : Ռաշէլին կը նայի
և զայն իր մօտը կը կանչէ) :

Բռնէ. — Հիւանդութիւնը անբուժելի է :

Զեմը. — Ի՛մն :

Բռնէ. — Ո՛հ , մարդկութեան հիւանդութիւնը :
Գու արտիկ համեմատ , դուն բարեացակամ արգա-
հատանք մը կը զգաս անոնց մասին որ քեզի կ'ըսեն՝
« Փոխէ ինքզինեզ , ուրիշ մարդ մը եղիլ » . ես իմ
գլխուս համեմատ , արհամարհանք կը զգամ անոնց
համար , որովհետեւ կ'ուզեն բռնել՝ « Անդին գնա մեր
արևին . . . քեզի համար տեղ չկայ » : Ձեմ՝ գիտեր թէ
նոյ պիտի կարենայ բուժել զանոնք . ինչմէ յոյս
չուժեմ՝ այդ մասին . բայց զոնէ պիտի հալածեմ՝
զանոնք :

Զեմը. — (Շարունակելով խօսիլ Ռաշէլին , որուն
ցած ձայնով խօսած է քուէյքըրին պատասխանին
միջոցին) : Ուրեմն Աստուածաշունչդ ալ քովդ չէ՞ :
Ուր է մայրիկդ :

Բռնէ. (Ռաշէլ ելլելով) — Կ'ուզես հետս դուրս
ելլել :

Զեմը. (Ռաշէլին) — Ի՛նչ ըրիր Աստուածաշունչը ,
օրիորդ Ռաշէլ :

Բռնէ. — Ձեռ իմանար տանտէրը որ կը պոռայ
կոր : Մտիկ ըրէ :

ՃԺ ԳԵԼ. (Գուլխին մէջ) — Ձեմ՝ ուզեր , հասկը-
ցա՛ր : Ձըլլար՝ ըսի : Ձըլլար :

Բռնէ. (Զեմը թընին , իր գլխարկն ու գաւա-
զանը շտապով առնելով) — Ելէքեղ կարմրած են , օդ
առնելու պէտք ունին : Նկուր , առտուան զովու-
թիւնը քեզ պիտի բռնէ հրատուրդ գիշերէդ :

Զեմը. (Գիթթի Պէլին գալը դիտելով) — Տարա-
կոյս չկայ որ այս կիներ՝ շատ զբաղող է :

Բռնէ. — Ատիկա մեր գիտնալու բանը չէ :
Կ'ուզէր որ իր սենեակէն դուրս ելլելու միջոցին՝
մարդ չգտնուէր հոս : Տնուր սենեակիդ բանալին :
Այստեղ կը դնեմ քիչ յետոյ՝ երբ գալ հոս , կը գտնեմ
Լ'նտանեկան ներքին բաներ կան , որ մարդ շտանել
ձևացնելու է : Դուրս ելլենք : Ա՛յս կուզայ :

Զեմը. — Ա՛յ , ինչպէս կուլայ կոր : Իրաւունք
ունիք . . . Հեմ՝ կրնար տեսնել ատիկա . . . Շրթանք :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ձ .

Բիթթի Պէլ (Ներս կը մտնէ լալով) . ՃՕՆ Պէլ
(կուգայ ետեւէն) :

Բ. ԳԵԼ. (Ռաշէլին , զէնկա մոցնելով այն սեն-
եակը , ուրիշ զուրս կ'ելլէ) — Գնա եղբորդ քով ,
Ռաշէլ , և զիս հոս ձգէ :

(Ամուսնոյն) Հագար անգամ կը խնդրեմ , մի՛ պա-
հանջեր որ ըսեմ թէ այդ քիչ մը դրամը ինչո՞ւ կը
պակսի հաշիւին մէջ . վեց ոսկի , ի՞նչ է քեզի համար :
Նկատէ որ կրնայի ծածկել այդ բանը՝ հաշիւները
խեղաթիւրելով : Բայց ես անկարող եմ խորհախա-
թիւն մը գործելու , նոյն իսկ զաւակներս ազատելու
համար . և նախընտրեցի քեզնէ խնդրել որ ինծի թող
տաս այդ մասին լուծիւն պահելու , չկարենալով ոչ
ձգմարտութիւնը ըսել , ոչ ալ ստիկ՝ առանց չար
գործ մը կատարած ըլլալու :

Ճ. ԳԵԼ. — Այն օրէն ի վեր ուր երէցը՝ ձեռքդ
իմ ձեռքդ մէջ դրաւ , այս կերպով զեռ չէիր դի-
մադրած ինծի :

Բ. ԳԵԼ. — Նուիրական պատճառ մը կայ ուրեմն :

Ճ. ԳԵԼ. — Կամ մեղապարտ :

Բ. ԳԵԼ. (Ձայրոյթով) Անկարելի է որ ըսածիդ
համոզուած ըլլաս :

ՃԺ ԳԵԼ. — Թերեւս :

Բ. ԳԵԼ. — Գթմ ինծի . կը սպաննես զիս այս-
պիսի վարմունքներով :

Ճ. ԳԵԼ. — Հոգ մ'ընէր . կարծածեղ աւելի ու-
ժով ես :

Բ. ԳԵԼ. — Մի՛ կարծիր . . . Ի սէր մեր խեղճ
զաւակներուն . . .

Ճ. ԳԵԼ. — Ուր որ գաղտնիք կայ , յանցանք
կայ՝ ինծի համար :

Բ. ԳԵԼ. — Հապա եթէ իմանայիր որ բարի
գործ մըն է եղածը , չիպիտ ցաւէիր :

Ճ. ԳԵԼ. — Եթէ բարի գործ մըն է , ինչո՞ւ կը
ծածկես :

Բ. ԳԵԼ. — Ինչո՞ւ : Վասն զի քու սիրտդ կար-
ծրացեր է , և պիտի արգիլէիր զիս իմ արտիս ձայ-
նին հետեւելու : Եւ սակայն , աղբատին ողորմուը
Աստուծոյ փոխ կուտայ :

Ճ. ԳԵԼ. — Աւելի աղէկ կ'ընես եթէ լաւ գրա-
ւականներու վրայ՝ տոկոսով փոխ տաս :

Բ. ԳԵԼ. — Աստուած թող ներէ քեզի այդ
զգացումներդ ու խօսքերդ :

Ճ. ԳԵԼ. (Սենեակին մէջ մեծաբայլ քայլելով) . —

Ժամանակէ մը ի վեր՝ շատ կը կարգաս կոր . չեմ ախորժիր որ կին մը այդ ունակութիւնն ունենայ : Գրագիտուհի ըլլալու միտք ունիս :

Բ. ՊԵԼ. — Ինչո՞ւ չար բաներ կ'ըսես ինծի՝ որովհետե՞ս առաջին անգամ ըլլալով՝ առանց վերապահման չեմ հնազանդիր քեզի : Պարզ ու տկար կին մըն եմ ես և ուրիշ ոչինչ : Ու քրիստոնէական պարտականութիւններէս դատ ոչինչ դիտեմ :

Ճ. ՊԵԼ. — Պարտականութիւնները գիտնալ ու չկատարել , սրբապղծութիւն է :

Բ. ՊԵԼ. — Ծնորջ ըրէ՛ որ քանի մը չաբաթ լուտթիւն պահեմ այս հաշիւներուն վրայ , և առաջին խօսքը որ բերնես պիտի ելլէ՝ ճշմարտութիւնը քեզի ուշ ընելու համար ներողութիւն խնդրող խօսք մը պիտի լսայ : Եւ այն ատեն ճիշդ ու ճիշդ պիտի պատմեմ ըրածս :

Ճ. ՊԵԼ. — Կ'ուզեմ որ բան մը չունենաս ծածկելու :

Բ. ՊԵԼ. — Աստուած գիտէ որ կեանքիս մէջ մէկ վայրկեան մը չկայ որուն յիշատակը կարենայ զիս կարմրեցնել :

Ճ. ՊԵԼ. — Եւ սակայն մինչև հիմա բան մը չեիր ծածկած ինձմէ :

Բ. ՊԵԼ. — Ետա անգամ՝ սարսափը մեզի ստել կը սորվեցնէ :

Ճ. ՊԵԼ. — Ուրեմն դիտես ստել :

Բ. ՊԵԼ. — Եթէ գիտնայի ստել , միթէ կը խնդրէի որ չհարցուփորձես զիս : Անողորմ դատաւոր մըն ես դուն :

Ճ. ՊԵԼ. — Անողորմ : Այդ դրամին հաշիւը պէտք է տաս ինծի :

Բ. ՊԵԼ. — Կը խնդրեմ որ մինչև վաղը ինծի ժամանակ տաս :

Ճ. ՊԵԼ. — Լաւ . մինչև վաղը ասոր խօսքը չպիտի ընեմ :

Բ. ՊԵԼ. (Անոր ձեռքը կ'ընթերցէ) — Ա՛խ , բարի ես դուն : Ինչո՞ւ այդպէս չես ֆիար միշտ :

Ճ. ՊԵԼ. — Լաւ , լաւ . վաղը , մի՛ մոռնար : (Դուրս կ'ելլէ)

Բ. ՊԵԼ. (Միայնակ) — Ինչո՞ւ , ամուսնոյս ձեռքը բռնած ատենս , այդ Աստուածաշունչը պահած ըլլալս ինքզինքիս մեղադրեցի : Պղծմտանքին ձայնը երբեք չի տկալիր (Կը մոմտայ) : Այժմ է դարձնեմ այդ գիրքը : (Դուրս կ'ելլէ յամբարայն) :

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՆՅՈՋ skfar

ՅԵՍՍԵՐՆԵ ԱՌԱՋԻՆ

Քուէյքըր , Չեքըրըն

ՉԵՒԷ. (Ներս կը մտնէ շուտով , կարծես փախչելով) . — Կըջբապէս , նաւահանդիսոր հասնիք :

ՔՈՒԷ. — Ի՛նչ ունիս , բարեկամ . յանկարծական խենթութիւն մըն է որ վրադ եկա :

ՉԵՒԷ. — Ետա աղէկ դիտեմ թէ ինչ կ'ընեմ :

ՔՈՒԷ. — Ինչո՞ւ ուրեմն այսպէս մէկէն ի մէկ տուն վազեցիր :

ՉԵՒԷ. (յուզուած) — Կը կարծէք որ տեսա :

ՔՈՒԷ. — Ձիւն մեր կողմը չարձուց , և ոչ իսկ գլուխը դարձնելը տեսայ : Իր երկու սպասաւորները ձիերնին բռնեցին ետէն գացին : Բայց ինչեւ խոյս կուտաս այդ երիտասարդէն :

ՉԵՒԷ. — Ապահով էք որ դիտ չանչացա :

ՔՈՒԷ. — Եթէ երբում ընելը ամբարիշտ սովորութիւն մը չըլլար , կրնայի երբորնալ :

ՉԵՒԷ. — Եունչ կ'առնեմ : Նիւտէք որ բարեկամ . ներէս մէկն է : Լորտ Թէլզովին է :

ՔՈՒԷ. — Ի՛նչ կ'ըլլայ : Բարեկամ մը ուրիշ մարդէ մը աւելի չար չէ :

ՉԵՒԷ. (Նեղզորտութեամբ՝ միծաբայ քաղիւով) . — Եթէ զիս տեսներ , ատկէջ աւելի գէշ բան չէր կրնար գալ զիսու : Ա՛յ ապաստանարանս բռնաբարուած , խաղաղութիւնս վրդովուած , անունս հոս ամենուն յայտնուած էր :

ՔՈՒԷ. — Ի՛նչ մեծ դժբաղդութիւն :

ՉԵՒԷ. — Գիտէք թէ ի՛նչ է անունս , որ այդպէս կը դատեց :

ՔՈՒԷ. — Տղայական բան մը կայ այդ վախիդ մէջ . վայրենի մըն ես պարզապէս , բայց եթէ շարունակես՝ ոճրագործ մը պիտի կարծուես :

ՉԵՒԷ. — Ա՛խ , ինչո՞ւ դուրս ելայ ձեզի հետ : Վստահ եմ որ տեսա զիս :

ՔՈՒԷ. — Ետա անգամ տեսած եմ զիւրքը հոս՝ որսէ դառնալուն այստեղ կուգայ :

ՉԵՒԷ. — Ինքն :

ՔՈՒԷ. — Այո , ինքը , իրեն բարեկամ երիտասարդ լորտերու հետ :

ՉԵՒԷ. — Գրուած է ուրեմն որ գլուխս աեղ մը



չպիտի կրնամ ճանաչեցնել : Միշտ բարեկամներ . . .

Քաւէ. — Մարդ շատ դժբաղ ըլլալու է այս խօսքն ըսելու աստիճանին հասած ըլլալու համար :
Զէնք. (Նեղբարեութեամբ) Երբէք այնքան զանազակ մը չունէիք՝ որքան այսօր :

Քաւէ. — Հնա, հիմակ ալ իմ վիզս փաթթէ յուսահատութիւնդ : Խեղճ տղայ. ոչինչ կրցաւ միտքդ զբաղեցնել՝ այս պտոյտին մէջ : Բնութիւնը մեռած է քու աչքերուդ :

Զէնք. — Կը կարծէք որ տիկին Պէլ շատ բորեւաշատ ըլլայ : Ինծի այնպէս կը թուի թէ Աստուածաշունչ մը տեսայ ձեռքը :

Քաւէ. (Կարուկ) — Այդպէս բան չտեսայ ես : Կին մըն է որ իր պարտականութիւնները կը սիրէ և Աստուծոյ կը վստահայ . բայց ձեռքը ո և է գիրք չտեսայ : (Մեկտակ) Ուրտեղուան չն է խելքը... Ի՛նչպէս կը համարձակի այդպիսի բան մը մտածել ... Անկի աղէկ է որ ինքզինքը ծովը նետէ քան այդ ճիւղին փաթթուի : (Բարձրաձայն) Շատ ցուրտ կին մըս է, որ կը յուզուի միայն իր զուկներուն համար՝ երբ հիւանդ են : Մնած օրէն ի վեր կը ճանչնամ զինքը :

Զէնք. — Հարիւր ոսկի զրաւ կը դնեմ, որ լորտ Թէլպոթին այստեղ պատահիլը փորձանք պիտի բերէ զլիսուս...

Քաւէ. — Ի՛նչպէս կարելի է :

Զէնք. — Ձեմ գիտեր ինչպէս, բայց պիտի տեսնէք որ խօսքս ճիշդ պիտի ելլէ : Եթէ այս կէտ մարդը մը սիրէր, լաւագոյն պիտի ըլլար որ այդ մարդը ուղիղը պայթեցնէր քան թէ զայն զլխէ հանէր : Ահալի բան կ'ըլլար, այնպէս չէ, եթէ զայն զլխէ հանէր :

Քաւէ. — Մէկ հատ զաղափար մը չեմ կրնար ունենալ որ յուսահատութեան չանցի :

Զէնք. — Անխուսափելի դժբաղդութիւն մը կը զգամ շուրջ : Վարժուած եմ ասոր : Ա՛յ չեմ դիմադրեր : Պիտի տեսնէք. հետաքրքրական տեսարան մըն է : Հանդիսուս գտած էի այստեղ. բայց թշնամիս հոս ալ պիտի գայ զիս Հալածել :

Քաւէ. — Ի՛նչ թշնամի :

Զէնք. — Անուանեցէք ինչպէս կ'ուզէք . Բաղդ . ձակատագիր . ինչ դիտումս :

Քաւէ. — Կրօնքի ձամբէն կը հեռանան կոր .

Զէնք. (Անոր մօտ կ'երթայ և ձեռքը կը բռնէ), Կը վախնաք որ գէշութիւն մը յառաջ կը բերեմ հոս, Մի՛ վախնաք : Տղու պէս անՊէլաւ եմ ես : Տոքթօր, անշուշտ երբեմն ժանտախտէ կամ բորոտութենէ

բռնուած մարդիկ տեսած էք : Ձեր առաջին փափաքը եղած է բնականաբար մարդանակ տուններէն հեռացնել զանոնք : Հեռացուցէք զիս ալ, վախեցէք զիս, և կամ մինակ ձեցեցէք զիս : Նախամեծար պիտի համարիմ ես ինքս զատուիլ քաշուիլ՝ քան թէ իմ դժբաղդութիւնս ուրիշներուն փոխանցել : (Վերջացած որսապտույտի մը աղաղակներ և մորախի հարուածներ կը լսուին) Տեսէք, ահա այսպէս կը հալածեն մենասէր վարազը :

S T U V X Y Z .

Զեբրորըն, Քուէյբըր, Ճօն Պէլ, Քիթթի Պէլ

ՃՏ Պէլ. (Իր կնոջը) — Գէշ բան ըրիր, Գիթթի, ինծի չըսելով թէ բարձրաստիճան անձնաւորութիւն մըն է եզեր այդ երիտասարդը :

(Ապաստւոր մը թէյ կը բերէ)

Ք. Պէլ. — Ի՛նչ կ'ըսես : Իրաւ որ, չէի գիտեր,

Ճ. Պէլ. — Շատ բարձրաստիճան : Լորտ Թէլպոթի

ինծի լուր դրկեր է թէ այդ անձը իր բարեկամն է, և երևելի մարդ մը որ չ'ուզեր ձանցցուիլ :

Ք. Պէլ. — Ա՛խ, ուրեմն ալ դժբաղդ չէ : Շատ ուրախ եմ : Բայց չեմ ուզեր խօսիլ իրեն հետ. թող տուր երթամ :

Ճ. Պէլ. — Գեցիլը, կեցիլը : Հրաւիրէ զինքը որ տղթթուրն պէս ինքն ալ մեզի հետ մնայ թէյ առնելու. լորտ Թէլպոթին հաճոյք պատճառած կ'ըլլանք այդպէսով :

(Կ'երթայ կը նստի աջ կողմը, թէյի սեղանին մօտ),

Քաւէ. — (Ձէթըրթընին, որ շարժում մը կ'ընէ իր սենեակը քաշուելու համար). Ձէ, չէ, մի՛ երթար. քու վրադ կը խօսին կոր :

Ք. Պէլ. (Քուէյբըրին). — Բարեկամս, կը

հաճեմ բարութիւնն ունեցող պարտին հարցնելու թէ կ'ուզէ ամուսնույս ու զուկներուս հետ նախամաշել :

Քաւէ. — Աղէկ չէք ընել զինքը հրաւիրելով . չ'ախորժիր հրաւերներէ :

Ք. Պէլ. — Ամուսինս է ուզողը :

Քաւէ. — (Հեղեմբար) Իր կամքը ամենազօր է : (Ձէթըրթընին) Տիկինը քեզ կը հրաւիրէ նախամաշի և կը փափաքի որ այս առաւոյ թէյը իրենց հետ մեկտեղ առնեն : (Յաճ ձայնով, Ձէթըրթընին). Մի՛ ընդունիլ. ամուսնոյն հրամանովն է որ այս հրաւերը կ'ընէ : Իր ուղիւովը չէ :

Ճ. Պէլ. (Նստած, լրագիր կարդալով, Քիթթիին կ'ուղղէ խօսքը). — Հրաւերը եղա՛ւ :

Ք. ՊԵԼ. — Տոբթէօրը կը խօսի կոր այդ մասին: Զեմբ. (Քուէյքըրին). — Մտիպուած եմ սենեակս քաշուիլ:

Զ. ՊԵԼ. — Հպարտութիւն, պարզապէս կը կարծէ թէ մեզի մեծ պատիւ մը պիտի ընէ՝ հրաւերինս ընդունելով:

(Կռնակը կը դարձնէ և կարդայը կը շարունակէ): Զեմբ. (Քուէյքըրին). — Արդէն պիտի չընդունէի: արգաստանքի զգացումով մըն է որ դիտ հրաւիրեցին:

(Ինչպիսի սենեակը կ'ուզողի, Քուէյքըրը ետևէն կ'երթայ և թևէն կը բռնէ կը կեցնէ: Սպասաւոր մը այս միջոցին տղաքը կը բերէ և սեղանին շուրջը կը նստեցնէ: Քուէյքըրը կը նստի խորը Գիթիի Պէլի աջ կողմը, ձօն Պէլ ձախ կողմը, կռնակը սենեակին դարձուցած. տղաքը իրենց մօրը բով են):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

Նոյնք, Լորս Թէշպոթ, Լորս Լաուսթրեյն, Լորս Բիկկարըն, եւ երեք երիտասարդ յոռետ, որսի գգեսներով:

Լ. Բ. ԹԵԼՆԻ. (բիշ մը դնելով). — Ո՛ր է, ո՛ր է: Հա, հա, ընկերս, բարեկամս: Ի՛նչ գործ ունիս հոս: Մեզի ձգեցիր գացիր: Ա՛յ երեսներ չես ուզեր կոր նայիլ: Որովհետեւ նշանաւոր մարդ մը եղար հիւսիս, այժմ մեզի բանի տեղ չես դնիր կոր: Ես Օքսֆորտի մէջ շէնք շնորհք բան մը չստովեցայ, կը խոստովանիմ, բայց ի պոքսութ. բայց աստիկա արգելք մը չէ որ նորէն քու բարեկամը եմ: Պարոններ, չա՛նս իմ պատուական բարեկամս:

Զեմբ. (Ուզելով զայն բնդմիջել) Միլորտ...

Լ. Բ. ԹԵԼՆԻ. — Իմ Զեմբըրթըն բարեկամս:

Զեմբ. (Լըօրէն, անոր ձեռքը սեղմելով). — Զործ, Զործ, միշտ անխորհրդապաշ:

Լ. Բ. ԹԵԼՆԻ. — Ինչու և կը նեղանաս: Ահաւաստիկ հեղինակը այն քերթուածներուն որ այնքան աղմուկ հանեցին: Պարոններ, իրեն հետ համայնաբանը գլուսեալ եմ: Իրաւ որ, այն ատենը մտքես չէր անցներ որ այսպիսի տաղանդ մը պիտի ունենար: Ա՛հ, սատանայ... կը նեղանայ կոր մեր պարոնը: Սիրելիս, ահա լորտ Լաուսթրեյնը և յորտ Բիկկարընը, որոնք քու Հեթլօք քերթուածդ գոց դիտեն: Ա՛հ, եթէ չաճիս մեզի հետ ընթերցող, գոհ պիտի մնաս իրենցմէ, պատուով խօսք: Վերջիք դիտասանին չափ աղէկ ոտանաւոր կ'արտասանեն: Աղուէսի որսորդութիւնէն համ չես առնիր. ապա թէ ոչ քեզի փոխ

կուտայի Ռեպեքքան, զոր հայրը ինծի ծախեց: Մի՛ մոռնար, որսէն յետոյ ամենքս ալ հոս պիտի գանք ընթերցու: Ուրեմն այս իրիկուն կը տեսնուինք: Ա՛հ, աղէկ պիտի զուարճանանք: Բայց, մտ ի՛նչ է, սպասուր ես:

Զեմբ. (Տխրութեամբ). — Այո, հօրս սուգը:

Լ. Բ. ԹԵԼՆԻ. — Ա՛հ բայց մի տարիքը առած էր: Ի՛նչ ընես: Ձրսեն, ժառանգորդ մըն ես հիմա:

Զեմբ. (Դառնութեամբ). — Այո, ժառանգեցի ինչ որ կը մնար իրմէ:

Լ. Բ. ԹԵԼՆԻ. — Իրաւ որ, եթէ զրամը կը ծախսես այնքան ազնուաբար որքան Օքսֆորտի մէջ կ'ընէիր, ատի պատիւ կը բերէ քեզի: Սակայն, արդէն այն այն ատեն բաւական վայրենի էիր: Հիմա, ես ալ քեզի պէս կ'ըլլամ կոր: Մեղամաղձութիւն կը սկսիմ կոր ունենալ, բայց մէկ կամ երկու ժամէն աւելի չի տևեր: Ա՛հ, տիկին Պէլ, դուք մաքրակրօն տիկին մըն էք: Տուէք ձեռքերնիդ. ձեռքս անգամ չսեղմեցիք այսօր: Կ'ըսեմ թէ մաքրակրօն տիկին մըն էք: Ապա թէ ոչ բարեկամս ձեզի կը յանձնարարէի:

Զ. ՊԵԼ. — Պատասխան տուր միլորտին, Գիթիի: Միլորտ, ձեր վսեմութիւնը դիտէ թէ ինչքան ամէկոտ է կինս: (Կնոջը) Բարեացակամ վարմունք մը ցոյց տուր միլորտին բարեկամին:

Ք. ՊԵԼ. — Ձեր վսեմութիւնը չի տարակուսիր անշուշտ թէ ամուսինս մեծ համակրութեամբ կը վարուի այն անձերուն հետ որ կը չաճին իր տունը բնակիլ:

Զ. ՊԵԼ. — Այնքան վայրենի է, միլորտ, որ դու մէկ անգամ իսկ պարոնին հետը չէ խօսած. կը հաւատօք, երբ ամիս է որ պարոնը մեր տունը կը բնակի, և դու մէկ անգամ հետը չէ խօսած:

Լ. Բ. ԹԵԼՆԻ. — Օ՛ր, պարոն ձօն Պէլ, այդ ամէկուտութենէն պէտք է բժշկել տիկինը: Աղէկ բան չէ: Քեզ տեսնեմ, Զեմբըրթըն, ի՛նչ կը նայիս ետես, բժշկէ զինքը, դուս ալ բժշկէ զինքը:

Ք. Ե. (Առանց ոտքի ելլելու). — Պարոն, հինգ վայրկեան է որ հոս ես, և բաւ մը չելաւ բերնէդ որ անտեղի ըլլայ:

Լ. Բ. ԹԵԼՆԻ. — Աս ի՛նչ է: Ո՛վ է այս վայրենի անասունը:

Զ. Ք. ՊԵԼ. — Ներդուրութիւն, միլորտ. քուէյքըր մըն է:

(Ծիծաղներ)

Լ. Բ. ԹԵԼՆԻ. — Իրաւ է: Օ՛ր, ի՛նչ բաղդ, քուէյքըր մը: (Աչքին ծայրով անոր նայելով) Բարեկամներս,

ասն էր մը գոր դեռ առիթ չենք ունեցած բռնելու։
(Լորտերը խնդալեն կը մարին)

Ձեւը. (Արագ կը մօտենայ լորտ Թեւոթին, կէս-
ձայնով) — Ընդհ, այս բոլոր ըստենիդ թե՛նուիթին
են. ես չեմ' ախորժիր։ Դուս գիտես իմ' ընտարու-
թիւնս։ Յիշէ Փրիմրոդ-բուրը։ Որսէ դառնալու՝ քեզ
բուրիք ունիմ։

Լորտ Թեւը. (Սարսափած) — Ա՛, եթէ նորէն
ատրճանակով խաղալու միտք ունիս, թող ուզածդ
ըլայ։ Ես կը կարծէի թէ քեզի չաճոցք կը պատճա-
ռէի։ Միրտդ կոտորեցի արդեօք. քիչ մը շատկէկ խմե-
ցինք այս առաւու։ Բայց ի՞նչ ըսի որ... Ուզեցի քեզ
ամենուն հետ մտերմական յարաբերութեան մէջ դնել։
Սա անուշիկ կնկանը համար է որ հոս ես եկած,
անանկ չէ։ Այգէս բան չի փախիր։

Ձեւը. — Միլորտ, միլորտ, ըսածդ չես գիտեր կոր։
Լորտ Թեւը. — Հասկցանք. գէշ արթնցեր է այս
առաւու։ Տիկին Պէլ, կանանչ թէյէն մի՛ տաք իրեն.
կ'ելլէ կը սպաննէ զիս այս իրիկուն։

Ք. Պէլ. (Մեկուտի) — Տէր Աստուած, ի՞նչ լրբու-
թեամբ կը խօսի հետս։

Լորտ Լաւորտ. (Գուզայ Ձեթըրթին ձեռքը սեղ-
մել)։ Շատ ուրախ եմ' ձեզ ծաննելուս. ձեր ոտանա-
ւորները զիս շատ գուարճացուցած են։

Ձեւը. — Զուարճացուցած։

Լորտ Լաւորտ. — Այո՛, շատ. և ուրախ եմ' ձեզ հոս
տեղաւորուած տեսնելով. դուք աւելի ճարպիկ էք
փրթիք քան Թեւոթիք, գրաւ փաստիկի պիտի տաք
իմի։

Լորտ Քեւը. — Այո՛, այո՛, որքան ալ իր ոսկիները
ամուսնոյն գրպանը թափէ Թեւոթի, պիտի չաջողի
ձեռք անցնել փողբիկ Քեթրինը, կամ ինչպէս կ'ըսեն
հոս, Քիթթին...

Ձեւը. — Այո՛, Քիթթին, Քեթրինի համառօտու-
թիւնը։

Ք. Պէլ. (Մեկուտի) — Նորէն։ Այդ երիտասարդ-
ները մատով զիս ցոյց կուտան, և անոր առջեւ...

Լորտ Քեւը. — Կարծեմ թէ Թեւոթի գործը
պիտի վերջի ի վերջոյ յաջողէր. բայց դուք անոր տեղը
բռնեցիք։ Իրաւ է որ ձորմ բարի տղայ է և ատոր
համար ձեզի դեմ ո՞ր չափի պահէ։ Անհանգիստ
կ'երևաք։

Ձեւը. — Այո՛, մանաւանդ այս վայրկեանին։

Լորտ Թեւը. — Բաւական է, պարոններ, բաւական
է, չափը մի՛ անցընէք։

(Երկու կրուսներ ներս կը մտնեն)

Լորտ Թեւը. (Ճօն Պէլի ուսուց դարենով) — Սիրելիս
Ճօն Պէլ, ֆրանսական և սպանիական էն աղէկ գի-
նիները ձեր բարեպաշտ խաթունիկ կնկանը տանը մէջ
կը գտնուին։ Որսէ դառնալուն՝ պիտի խմենք այդ
գինիները, և անմարակ բռնէ ինծի եթէ տաւր աղուէս
չբերեմ'։ Էնոր մուշտակ շինելու համար։ Եկէք մեր
ծամբայ ելլիլը դիտեցէք։ Ձեւն վերջը, Լաւաւորտէյ,
կ'աղաւմ, անցէք։ Յոտնութիւն, տիկնայք և տեսարք.
այս իրիկուն, եթէ Ռեպէքքա ձիս գլխուս փորձանք
մը չբերէ։

Ճ. Պէլ. — Պարոն Ձեթըրթըն, մի՛նապէս երջա-
նիկ եմ' ձեզի հետ ծանօթանալուս։ (Ձեռքը ուժով կը
սեղմէ՝ ուսը կոտրելու աստիճան) Ամբողջ տունն ձեր
տրամադրութեան տակ է։

(Քիթթինի, որ իր սենեակը քաշուելու վրայ է)
Քեթրին, չխօսիս քիչ մը այս պարտին հետ։ Պէտք
է աւելի աղուոր և աւելի սուղ սենեակ մը տալ իրեն։

Ք. Պէլ. — Զաւակներս ինձի կը սպասեն։

Ճ. Պէլ. — Յեցիք, կեցիք. քաղաքավար եղիր.
խօսքս մտիկ բրէ։

Ձեւը. (Բուռլըրին) — Դուրս ելլենք սրտեղէն։
Վերջին ապաստանարանի կոխուած տեսնել, միակ
հանգիստը խաղալու, քաղցր անձանքութիւնդ մատ-
նուած, գիշերելը մէջ աչքան կոպիտ լոյսերու ար-
շաւելը տեսնել, ի՞նչ չարչարանք...։ Երթանք, կ'աղա-
չեմ'։ Զրոյ՛ ձեզի։

Ճ. Պէլ. (Բուռլըրին) Պէտք ունիմ' ձեզի, տղե-
թէօք. պարոնը կնոջս հետ ձեզեցէք. անպատճառ
պէտք ունիմ' ձեզի. խօսելիք ունիմ'։ Ձեզ պիտի
հաշտեցնեմ' նորին Վստուքեան հետ։

Քաւը. — Դուրս ելլելու փափաք չունիմ։

(Ամենքը դուրս կ'ելլեն։ Բուռլըրը կը մնայ նստած՝
տեսարանին մէջտեղը։ Քիթթի և Ձեթըրթըն ոտքի
վրայ, աչքերնին գետիկը՝ շուարած)։

Տ Ե Ս Ա Ր Ե Ն Գ

Ձեթըրթն, Բուռլըրը, Քիթթի Պէլ

Քաւը. — (Քիթթի Պէլին)

(Ձեթընի ձախ ձեռքը կը բռնէ և իր ձեռքը
անոր սրտին վրայ կը դնէ)։

Երիտասարդ, պարզ և նախնական սրտերը դեռ
չեն դիտեր զպալ ալն բուռն զայրոյթները դր կը
ներշնչէ մարդոց տեսքը։ Տղան, խնդ՛ տղաս. միայն
նովթիւնը շատ փառեցաւոր սէր մը կը դառնայ։
Այդ մթնոլորտին մէջ ապրելէ յետոյ, մարդ ալիւս
չի կրնար ամենափոքր օտար շունչ հանդուրժել։

Կեսերը փոթորիկ մըն է, բարեկամս, պէտք է վարժուիլ ծովուն դիմանալու: Յաւալի բան չէ, տիկին Պէլ, որ իր տարիքին մէջ՝ պէտք զգայ նաւահանգիստ մը քաշուելու: Պիտի ձգեմ որ խօսիք իրեն և յանդիմանէք զինքը:

Ք. Պէլ (վրդոված)։ — Ձէ, բարեկամս. կեցէք, կ'աղաչեմ: Ըճճ Պէլ կը նեղանայ եթէ քիչ յետոյ ձեզ հոս չգտնէ: Եւ արդէն, պարտք միթէ չի փափաքիր երթալ իր մանկութեան բարեկամներուն միանալ: Զարմացած եմ որ անոց հետ չգնաց:

Ք. — Եւ, — Անոց հանձն աղմուկը քեզ շատ ձանձրացուց, այնպէս չէ, սիրելի աղջիկս:

Ք. Պէլ. — Ա՛, թէ իրենց աղմուկը, թէ իրենց դիտաւարութիւնները. անոց անշուշտ իրենց ամէն զգալովից կ'ըսեն պարտին:

Չէ՛. — (Մեկուսի). Լսե՛ր է անոց ըսածները... ու վշտացած կ'երեւայ... Առաջուան կիկը չէ, փոխուած է...

Ք. Պէլ. — (Քուէյքըրին, քիչ մը զսպուած յուզմունքով մը). Կը զգայ, բարեկամս, որ դեռ բաւական միևնա՛կ ապրած չեմ:

Ք. — (Քիթթի Պէլին). Շատ կարևորութիւն մի՛ տար յիմարութիւններու:

Ք. Պէլ. — Ահաւա՛րիկ գիրք մը զոր աղջկանս ձեռքը տեսայ: (Քուէյքըրին) Հարցուցէք պարտին թէ իր չէ՞ արգիօք այս գիրքը:

Չէ՛. — Այո՛, իմն էր. ու հիմա, շատ գոհ պիտի ըլլայի եթէ նորէն ձեռքս անցնէր:

Ք. Պէլ. — (Մեկուսի). Շատ մեծ փափաք ցոյց կուտայ գիրքը՝ ձեռքէս ընդունելու: Աստուած իմ, ալ հիմա չպիտի համարձակիմ գիրքը իրեն դարձնել, ոչ ալ պահել:

Ք. — (Մեկուսի). Խեղճ կինը շուարած կ'երևայ:

(Աստուածաշունչը կ'առնէ ձեռքէն և զրպանը կը դնէ, երկուքին ալ շուարած մը դիտելէ յետոյ: — Ձէթըրթընին). Սոսա եղբի, կ'աղաչեմ: Տես, լալուն մազ մը մնացած է:

Ք. Պէլ. — (Ինչիկը բռնելով) Պարտք շատ զուարթ եւ անշուշտ շատ ալ բարի բարեկամը ունի:

Ք. — Ա՛, զինքը չմեղադրենք. ինքը բնաւ փափաք չունէր այդ բարեկամները տեսնելու:

Ք. Պէլ. — Գիտեմ, Պ. Ձէթըրթըն չէ՛ր սպասեր անոց հոս գալուն:

Չէ՛. — Մահացու թշնամի մը ներկայութիւնը այդքան աղիտաբեր պիտի չըլլար, հաւատացե՛ր, սիկին:

Ք. Պէլ. — Անոց շատ լաւ ճանչնալու ձև ունին Պ. Ձէթըրթընը, միեզեւ. մենք ա՛յնքան քիչ կը ճանչնանք զինքը:

Ք. — (Կէս ձայնով, Ձէթըրթընին). Ա՛, թըշուռաւակները: Ձինքը սրտէն խոցեր են:

Չէ՛. — (Քուէյքըրին). Հապա զիս:

Ք. Պէլ. — Պ. Ձէթըրթըն տընուշտ անոց վարքին ծանօթ է ինչպէս անոց ծանօթ են իր ծրագրերներուն: Բայց ինչպէս բացատրեցին անոց պարտին այստեղ բնակիլը:

Ք. — (Ուրի կ'իլէ). Գետնին տակը անցնին արտերու վարչ յարձակող սա մարտինքը, զոր «ախորժիկ» մարդ կ'անուանեն: Տեսէ՛ք որքան չարիք հասուցին մէկ բուպէի մէջ:

Չէ՛. — (Քուէյքըն նստեցնելով). Աստուծո սիրոյն, դուքս մի՛ ելլէք մինչև որ չզիտամ՝ թէ ինչ ունի ինծի դէմ: Ահաւի կերպով վրդոված եմ:

Ք. Պէլ. — Պ. Պէլ յանձնարարեց ինծի որ Պ. Ձէթըրթընին աւելի վայելուչ սենեակ մը տամ:

Չէ՛. — Ո՛հ, իմ սենեակս ամենէն յարմար է իմ ծրագրերներու:

Ք. Պէլ. — Բայց մարդ երբ իր ծրագրերնք զաղտնի կը պահէ, վերջի վերջոյ աւելի վախ կը ներշնչէ քան ինչ որ համակրութիւն կը ներշնչէր առաջ, և ես...

Չէ՛. — Եւ... ինչ...

Ք. Պէլ. — Ինծի կը թուի թէ...

Ք. — Ի՛նչ բնակ կ'ուզես:

Ք. Պէլ. — Թէ ալ երեսասարդ լորտերը կերպով մը իրաւունք ունին զարմանալու որ իրենց բաւելիամը գիրքնք ձգած ըլլայ՝ իր անունն ու կեանքը մերինին պէս պարզ ընտանիքի մը մէջ ծածկելու համար:

Ք. — (Ձէթըրթընին). Մի՛ խռովիր, բարեկամ. բնակ կ'ուզէ թէ, այստեղ եկած ատենդ, այդ հարուստ լորտիկներուն հարուստ բարեկամն ըլլալու ձեռք չունէիր:

Չէ՛. — (Մարտութեամբ) — Եթէ այստեղ ինծի հարցնէին ինչպիսիան վիճակս, անուան և կեանքիս պատմութիւնը, սուք այս տունէն ներս չէի դնել... Եթէ այսօր ալ՝ մէկը ատոց մասին ինծի հարցում մը ուղղէ, անմիջապէս կը ձգեմ կ'երթամ:

Ք. — Լուսինն մը որ հպարտութեան արդիւնք է, կրնայ գէշ մեկնուիլ, ինչպէս կը տեսնես:

Չէ՛. — (Կ'ուզէ պատասխանել, յետոյ ետ կը կենայ այդ մտքէն և կը գոչէ) — Չարչարանք մը աւելի՛ յարտիրոսութեան մը մէջ ինչ փոյթ:

(Իր սենեակը կը քաշուի փախչելով):

Ք. ՊԵԼ. (Սարափամ). Ա՛հ, Աստուած իմ: Ինչո՞ւ փախաւ այդպէս: Ընտրին անգամն է որ իրեն չես կը խօսիմ, և խօսքերս ցաւ պատճառեցին իրեն... բայց յանցանքը իմն է... ինչո՞ւ եկաւ հոս... չեմ չափաւար... և կ'ուզեմ գիտնալ: Ամբողջ տունս տեղս տակնուվայր եղած է իրեն համար և իր պատճառով: Ի՛նչ եմ ըրած այդ ամենուն: Ինչո՞ւ դիւքը ուրիշ տեղ չտարիք և հոս բերիք: Երանի թէ երբեք երեւցած չըլլայի, և այդ մարդիկը երբեք տեսած չըլլային:

ԲՈՒԷ. — (Անհամբերութեամբ ու ցաւով). Բայց միմիայն ինձի ըսելու էիր առիթաւ: Ես ոչ կը վշտանամ ոչ կը ցաւիմ: Բայց անոր ըսելով մեծ սխալ էր:

Ք. ՊԵԼ. — Բայց, բարեկամս, լսեցի՞ր այդ երիտասարդներուն ըսածները: Աստուած իմ, ինչպէս կ'ըլլայ որ ամենք կարող կ'ըլլան այդպէս վրդովելու կենք մը զոր Յիսուս ինքն իսկ պիտի օրհնէր: Ընէք, դուք որ մարդ մըն էք, դուք որ այդ շար դատարկապորտներէն չէք, դուք որ ծանրագույն էք ու բարի, դուք որ կը հաւատար ճշգրիտ և Աստուծոյ գոյութեան, ըսէք, բարեկամս, կին մը ինչպէս ապրելու է: Ո՛ր պահուածելու է: Լուսն կը կենայի, աչքերս միշտ դէտին կը ծռէին, առանձնութիւնը քողի մը պէս վերստ ձգած էի, և պատուեցին այդ քօղի: Կը կարծէի թէ գոյութիւնս մէկը չէր պիտի, և իբրև իրենց մէկ կիւնը կը նկատեն եզեր դիւ, կը կարծէի թէ յարգուած եմ, և զբաւի մը առարկան եմ եղեր: Ի՛նչ օգուտ ունեցան իմ երկու զաւակներս որ միշտ քովս եմ պահած պահպան հրեշտակներու պէս Ի՛նչ օգուտ ունեցան իմ խորին առանձնացումս: Այ՛ ճիւղի կենք պիտի յարգուի, եթէ ես չըլրաց յարգելի, և եթէ կը բաւէ որ երիտասարդներ կենց մը փողոցէն անցնիլը տեսնեն՝ որպէս զի անոր անունը փափերին անցնեն և խաղան անով ու գնդակի պէս զայն իրարու տեսնեն . . .

(Չալնը կը կտրի: Կուլայ):

Այն, բարեկամս, բարեկամս. կրցածնիդ ըրէք, որ ալ անգամ մըն ալ ոտք չկոխեն իմ տունս:

ԲՈՒԷ. — Ո՛վ:

Ք. ՊԵԼ. — Անոնք, անոնք բոլորն ալ... ամենքն ալ...

ԲՈՒԷ. — Ի՛նչպէս...

Ք. ՊԵԼ. — Ան ալ... այո՛, ան ալ:

(Կը շնչկտայ)

ԲՈՒԷ. — Կ'ուզես ուրիշն ոպանել զինքը: Վերջապէս, ինչ է ըրած:

Ք. ՊԵԼ. (Խորապէս յուզուած) Օ՛հ, Աստուած իմ, ես զինքը սպաննել... ես որ կ'ուզէի... Տէր Աստուած, դուն որուն անգագար կ'աղօթեմ, դուն գիտես թէ ես կ'ուզեմ սպաննել զինքը. բայց ես քեզի կը խօսիմ, օւ չեմ՝ զիտեք թէ կ'իմանան զիս... Սիրտս քեզի կը բանամ, ու դուն չես ըսեր ինձի թէ կը կարգան ինչ որ կայ հոս գրուած: Եւ եթէ քու աչքը կարգացած է հոն գրուածը, ինչպէս գիտնամ թէ զո՞րհն ես կամ ոչ: Ա՛խ, բարեկամս... բան մը ունիմ հոս (սիրտը ցոյց տալով) որ կ'ուզէի ըսել... Ա՛խ, եթէ հայրս ողջ ըլլար...

(Ժուէյքըրին ձեռքը կը բռնէ)

Այո՛, վարկեաններ կան ուր կ'ուզէի կաթոլիկ ըլլալ, որովհետեւ խոստովանանք ունին ամենք: Վերջապէս, ուրիշ բան չէ ան եթէ ոչ սիրտը բանալ. բայց աստուածայնացած սիրտ բանալ մը պէտք ունիմ ատոր:

ԲՈՒԷ. — Աղջիկս, եթէ խիղճդ և աղօթքներդ քեզի բաւական ենցուլ չեն, ինչո՞ն ինձի չես դիմեր:

Ք. ՊԵԼ. — Լաւ, բացատրեցէք ուրեմն ինձի թէ ինչո՞ւ այդ երիտասարդը կը վրդովէ զիս, ինչո՞ւ կամ քիս հակառակ՝ արցունք կը թափեմ՝ զինքը տեսնելով, այո՛, միմիայն տեսնելով:

ԲՈՒԷ. — Ո՛վ կին, տկար կին: Աստուծաւ ուրիշն, արցունքներդ ծածկէ: Ահա ինքը, կուգայ կոր:

Ք. ՊԵԼ. — Աստուած իմ, ինչպէս դժմըր այլայլած է:

ՉԻՒՐ. (Ներս կը մտնէ, խենթի պէս, առանց գլխարկի: Սենեակին մէկ ծայրէն միւսը կը քալէ, ու կը խօսի, առանց մէկը տեսնելու)

... Եւ արդէն, և արդէն, անոնց հարստութիւնն ալ իրենցը չէ, ինչպէս այս սենեակը իմն չէ: Աշխարհ՛ բան մըն է միայն: Մէկ խօսքով կարելի է աշխարհ կորսնցնել կամ շահիլ, մէկ քառորդ ժամու մէջ: Չկայ բան մը որ մերն ըլլայ՝ բաց ի վեց ոտնաչափ հողէն ուր պիտի պառկինք. մեր Շէյքսպիր հայրն է ըսած ասիկա: Սենեակինը պիտի դարձնենմ՝ ձեռի՛ երբ որ ուզեք. աւելի պզտիկ սենեակ մը եթէ ունիք՝ ան տուէք ինձի: Սակայն կ'ուզէի դեռ սպասել նա՛մակի մը պատասխանին. թերեւ յաջողի: Բայց ալ խօսքը չընենք ատոր: (Թիկնաթիւնը մը մէջ կը նետուի):

ԲՈՒԷ. (Ոտքի կ'ելլէ և անոր մօտ կ'երթայ, անոր անոր գլուխը բռնելով. կէս ձայնով) Լուէ, բարեկամս, լուէ: Հանդարտեցնո՛ւր հրատուրդը գլուխդ Թո՛ղ որ յուզմունքներդ լուռութեամբ անցնին, և մի՛ աճաբեկեր սա երկասարկ կինը որ օտար է քեզի:

ՉԻՒՐ. (Ցանկարծ ոտքի կ'ելլէ՝ «օտար» բառին, և ԲՈՒԷ-էն շեղուած) Ես քեզի զգում եմ (կ'ըսէ). — Աշխարհիս վրա

Հիմա չկայ մէկը որ ինծի օտար չըլլայ: Ամենուն առջեւ, պէտք է բարեւեմ ու լռեմ: Երբ խօսիմ, շատ անպատշաճ յանդիմութիւն մը բրած կ'ըլլամ, և որուն համար խոնարհաբար ներողութիւն խնդրելու եմ. քիչ մը հանգիստ միայն կ'ուզէի գտնել այս տան մէջ, քանի մը երես բան՝ որ պարտական եմ՝ գրել՝ իրա-բու հետ կարելու չափ աստի գտնել. այո՛, պարտական եմ՝ այդ քանի մը երեսը գրել և տալ, ինչպէս ատաղ-ձադործը պարտական է երեսագործին յանձնել՝ տա-ժանքով չլիւսած քանի մը տախտակ: Գրքի գործաւոր եմ ես. այսքան: Ունեցածէս աւելի մեծ աշխատանոցի պէտք չունեմ, և Պ. Պէլլի սիրտը չափազանց շար-ժած կ'երևայ լորտ Թէլլպոթի ինծի ցոյց տուած բարեկամութենէն: Այս տան մէջ կրնան ուրիշ լորտ Թէլլպոթը, հասկանալի է: Բայց իր ինծի համար ունեցած բարեկամութիւնը ոչինչ է: Անկա կը կրթնի Հին դպագիտի մը վրայ զոր մէկ բառով կրնամ ջնջել, Հին Թուանշանի մը վրայ զոր իր մտքէն պիտի օրբեմ չունեմ, և զոր չայրս իր պատանքին ծաղեւ-րուն մէջ առաւ Հնար տարաւ. բաւական խոշոր Թուանշան մը, ծիլոյ է, և որուն շնորհիւ ամենքը ինծի խոնարհութիւն կ'ընէին, ամենքը ձեռքս կը սեղմէին: Բայց այդ բոլորը վերջացած է. ես գրքի գործաւոր եմ: Մնաց բարով, տիկին: Մնաց բարով, պարոն: Հն, Հն: Ժամանակ կը կորսնցնեմ կոր: Աշ-խատելու և աշխատելու է:

(Մենքաբայ վեր կ'ելլէ սանդուղէն ու կը փակուի իր սենեակը):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե

Քոռէյրըր, Քիթթի Պէլ (սարսափահար)

Քոռէյ. — Սարսափով լեցուած ես, ալնպէս չէ, Քիթթի:

Ք. Պէլ. — Այո՛:

Քոռէյ. — Ես ալ:

Ք. Պէլ. — Դուք ալ, Դուք որ այնքան ուժով էք, դուք որուն երբեք յուզուիլը չեմ տեսած: Աս-տուած իմ, ինչ կայ այստեղ որ չեմ կրնար կոր հաս-կընալ: Այս երիտասարդը մեզ ամեն խաբեց. իբրեւ աղբատ եկաւ հոս ապրեցաւ, և սակայն հարուստ է եղեր: Այդ լորտերը իրեն հետ ինչպէս հաւատարի մը հետ խօսեցան: Ի՞նչ ընելու եկաւ հոս. ինչ ուզեց՝ իր վրայ արգահատանք հրաւիրելով: Եւ սակայն ինչ որ կ'ընէ՝ ճշմարիտ կը թուի, և ինքը՝ շատ գիբաղդ կ'երևայ:

Քոռէյ. — Աղէկ կ'ըլլար որ այս երիտասարդը մեռնէր:

Ք. Պէլ. — Մոռնի՛ր... Ինչո՞ւ:

Քոռէյ. — Որովհետեւ լաւագոյն է մահը քան յի-մարութիւնը:

Ք. Պէլ. — Ուրեմն կը կարծէք թէ... Այո, մա-րելիք կուգայ վրաս...

(Կ'իջնայ աթոռին վրայ)

Քոռէյ. — Ամենէն ուժեղ բանականութիւնը պիտի չկարենար դիմանալ իր կրած տառապանքին: Պէտք է ամբողջ մոռնուան քեդի ըսեմ, քիթթի Պէլ: Եր-կեքին մէջ հրեշտակ մը չկայ որ քեռէ աւելի մաքուր ըլլայ: Նայուածքը զոր Տիրամայրը կ'արձակէ իր որդւոյն վրայ՝ աւելի անարատ չէ քան քու նայուածքը: Եւ սակայն առանց ուղեւոր՝ դու շատ չարիք ըրիր քու շուրջը:

Ք. Պէլ. — Ատուած իմ. կարելի բան է:

Քոռէյ. — Մտիկ ըրէ, կ'աղաչեմ. ինչպէս չա-րիքը կը ծագի բարիքէն և անկարգութիւնը կարգա-ւորութենէն, ահա ինչ որ դու չես կրնար ըմբռ-նել, այնպէս չէ: Գիտցիր ուրեմն, սիրելի աղջկիւ, որ ատոր համար բաւական եղաւ քու մէկ նայուածքը, երեղեղեւած՝ ամենէն գեղեցիկ առաքելութենէն որ Ատուծոյ աջակողմը կը գահէ, զորութենէն: Այս երիտասարդը որուն միտքը չափազանց կանուխ հա-սունցած է բանաստեղծութեան կրակներուն տակ՝ ինչպէս հրակէզ ջերմոցի մը մէջ, տղու մը միամիտ սիրտը պահած է: Ընտանիք չունի այլ ևս, և անդի-տակցաբար իրեն համար ընտանիք մը կը փնտրէ, վարժուցաւ հոս քու իր մօտը ապրիլդ տեսնելու, և թերեւ վարժուցեալ նաեւ քու տեսքէդ ու մայրա-կան շնորհէդ ներշնչուելու: Թագադութիւնը որ կը տիրէ քու շուրջը՝ այնքան վտանգաւոր է եղած այդ երագուն մտքին համար որքան քունը ձերմակ բքա-բոնին տակ: Յանցանքը քուկը չէ, եթէ, ամէն կող-մէ վտարուած, ինքզինքը երջանիկ է կարծած՝ բա-րեացական ընդունելութիւն մը գտնելով. բայց վեր-ջապէս այս լուի ու խորունկ համակրութեան կեանքը իր ամբողջ կեանքը եղած է: Կը կարծես թէ իրաւունք ունիս գայն իրմէ խելու:

Ք. Պէլ. — Անաղ. կը կարծէք ուրեմն թէ մեզ չէ խաբած:

Քոռէյ. — Լուվա տասնըութը տարեկանէն աւելի էր, Քիթթի: Ու չես կարգար Ձեթըրթընի ձակտին վրայ՝ Թշուառութեան երկշտութիւնը: Ես մինչեւ յա-տակը սուգած եմ այդ Թշուառութեան. խորունկ է ան:

Ք. Պէլ. — Ատուած իմ. ով գիտէ որքան ցաւ պատճառեց իրեն քիչ մը առաջ ըսածս:

Քաւեյ. — Իրաւունք ունիք, տիկին:

Ք. Պէլ. — Տիկին: Ա՛խ, մի՛ նեղանաք, եթէ զիստաւիք թէ ինչ ըրած եմ և թէ ինչ ընել մտադիր էի:

Քաւեյ. — Կ'ուզէի զիստաւ:

Ք. Պէլ. — Պ. Չեթլըթթիին Համար քանի մը դումարներ իմ կողմէս վճարած եմ, և ամուսնոյս չեմ՝ յայտնած: Գեռ չստացայ իրմէ այդ գումարները, ու բերանս ալ յառաջ չէր երթար ուղեւ: Ամուսինս եղածը զուշակեց: Ժիշդ այս միջոցիս, թերեւս այս մասին պիտի խօսէի այդ երիտասարդին: Օ՛հ, սրբան շնորհակալ եմ որ զիս ետ կեցուցիք այդ չարագործութենէն: Այ՛ո, ըրածս ոճիր մը պիտի ըլլար՝ ապաճօպապէս, այնպէս չէ:

Քաւեյ. — Ինքն իսկ պիտի նախընտրէր ոճիր մը գործել քան թէ ձեզի գոհացում չտալ, տարակոյսս չունիմ այդ մասին, զիսեմ թէ՛ սրբան խրոխտ է: Զգուշութեամբ վարուիք Հետը, աղջկա: Բոլորովին բարոյական և գրեթէ անբուժելի Հիւանդութենէն մը բռնուած է, որ երբեմն փոխանցելի ալ է. ահաւոր Հիւանդութիւն որ կը յարձակի մահաւանդ երիտասարդի, կրակոտ և կեանքի մէջ գեռ նոր բացուած Հոգիներէ վրայ, որոնք արագորութեան ու զեղեցկութեան սիրովը վառուած են, և որոնք այս աշխարհս կուգան՝ Հոն ամէն քայլի Հանդիպելու Համար գէշ յօրինուած ընկերութեան մը բոլոր անիրաւութիւններուն ու բոլոր տգեղութիւններուն: Այդ Հիւանդութիւնը՝ կեանքի ատելութիւնը և մահուան սեղն է, յամուս անձնասպանութիւնն է:

Ք. Պէլ. — Ա՛խ, Աստուած թող ներէ իրեն: Իրաւ կ'ըսեք:

(Գլուխը կը ծածկէ ձեռքերուն մէջ ու կուլայ):

Քաւեյ. — Յամառ. կ'ըսեմ, որովհետեւ Հազուադէպ է որ այդ դժբաղդները Հրաժարին իրենց ծրագրէն երբ Հոգ մը իրենց մտքին մէջ վճռուած է ան:

Ք. Պէլ. — Ուրեմն այդ միջակիս արդէն Հասած է: Ապահով էք: Ամէ՛ն բան ըսեք ինձի: Ձեմ՝ ուզեր որ մեռնի: Ի՛նչ ըրած է. ինչ է ուզածը: Ա՛յրքան երիտասարդ... երկնային Հոգի մը. Հրէշտակի պէս բարի, տղու պէս պարզամտ. մաքրութեամբ Համակ շողացող այսպիսի Հոգի մը ոճիրներու ոճիրին մէջ իյնայ, այն ոճիրը որուն Քրիստոս անգամ պիտի վարասներ ներել: Ձէ, այդ բանը տեղի չպիտի տնեն: Այո՛, ան ինչդիներ չպիտի սպանեն: Ինչ պէտք է իրեն. դրամ: Ես կը գտնեմ: Տեղէ մը Հարկաւ կը ձարենք իրեն Համար: Ի՛նչ, ահա գոհարեղէններ, որ երբեք չեմ Համած կրել. աւէք, ծախեցէք բոլորն

ալ: Ինչդիներ սպաննել, Հոն, իմ ու զակնիբուս առջև: Ծախեցէք, ծախեցէք. ես բան մը կը գտնեմ ըսելու: Նորէն կը ծածկեմ ըրածս. վերջապէս ես ալ իմ ոճիրս կը գործեմ, կը ստեմ: Ա՛յրքան:

Քաւեյ. — Ձեռքերդ, աղջիկս, ձեռքերդ. տուր, պաշտեմ՝ գտնեմ:

(Հնոր եղբւ. ձեռքերը միացնելով կը Համբուրէ) Քու յանցանքներդ անմեղ են, և քու ողորմած ստութիւնդ ծածկելու Համար, սրբուհիները՝ քոյրերդ՝ իրենց քօղերը պիտի տարածէին. բայց պահէ գոհարեղէններդ. ան այնպիսի մարդ մըն է որ քան անգամ կը նախընտրէ մեռնիլ քան ընդունիլ ոսկի մը զոր ինքը չէ վստակած կամ իր ընտանիքէն չէ ստացած: Գիտեմ իր չպիտի յաջողիմ՝ որքան մը մաքրաւիմ՝ զինքը բուժել իր միակ յանցանքէն, մոլութիւն մը որ գրեթէ առաքելի է, ազնիւ պակասութիւն, վե՛սմ մեղք, աղքատութեան Հպարտութիւնը:

Ք. Պէլ. — Բայց նամակի մը խօսքը ըրաւ, այնպէս չէ, նամակ մը գրեր է անձի մը որմէ օգնութիւն կը յուսայ:

Քաւեյ. — Ա՛, ճիշդ է: Ատիկա վրիպած էր իմ մտքէն, բայց քու սիրտդ զայն լսեր է: Այո, ատի փրկութեան խորիստ մըն է իրեն Հետ ատոր պիտի կրթին: (Կ'ուզէ դուրս ելլել)

Ք. Պէլ. — Բայց... Ինչ կ'ուզէիր ըսել՝ յորտ Թէլլարի մասին խօսելով. « Անիկա կրնան սիրել այս տան մէջ, Հասկանալի է »:

Քաւեյ. — Միտք մի՛ յոգնեցնէր այդ խօսքն վրայ: Իրեն պէս միտք մը՝ իր աշխատութեանց ու նեղութիւններուն մէջ խորատուգուծած, անմատչելի է նախանձու սրտնեղութեան մը գձձութիւններուն, և առաւել և՛ այդ արկածախնդիր պարուններուն սնոտի ինքնահաւանութիւններուն: Ի՛նչ ըսել կրնայ ուզել այդ խօսքը: Պէտք էր ուրեմն ենթադրել թէ ան կը նկատէ յորտ Թէլլարի իբրեւ քիթթի Պէլը զվէ՛ Հանել ջանացող և յաջողելու մտք, և ենթադրել թէ Չեթլըթթի իրաւունք կը կարծէ ունենալ ատկից նախանձ գազար. ենթադրել ուրեմն թէ այդ մտքմական Հրապարակ իր մէջ արդէն տարփանքի է փոխուած... Եթէ այդ այդպէս է...

Ք. Պէլ. — Օ՛հ, ա՛յ բան մը մի՛ ըսեք ինձի... ձրեցէք փաշիմ...

(Կը փախչի ականջները քոցելով, Քուէյքըրը անոր ետեւէն բարձրաձայն կ'ըսէ)

Քաւեյ. — Եթէ այդ այդպէս է, կը նախընտրէի թողուլ որ մեռնի:

ԱՐԱՐՈՒԹ ԵՐՈՐԴ

Ձերորթնի սենեակը, մութ. փոքրիկ. աղ-
բասիկ, առանց կրակի. ողորմելի անկողին մը՝
ապնույթայ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա .

Ձերորթն, Առանձին

(Անկողնի ոտքի կողմը նստած է և ծուկերուն
վրայ կը գրէ)

Ապահով եմ որ էն զի սիրեր: — Իսկ ես...
այ չեմ ուզեր մոտենել այդ մասին: — Ձեռքերս ոտու
կտրած են. գլուխս կրակներու մէջ է. Աջա միս մի-
նակ եմ աշխատութեան դիմացը: Այ խնդրե՛ք ժու-
տելու և բարի ըլլալու, բարեկեղու և ձեռք սեղմելու
վրայ չէ. այդ բոլոր կատակերգութիւնը խաղացուած
է. Հիմա ուրիշ կատակերգութիւն մը պէտք է խա-
ղամ ինքզինքիս հետ. պէտք է, այս պահուս, որ
կամբա բաւական զորաւոր ըլլայ՝ և կարենայ հոգիս
բռնել տանիլ վերականգնացած դիակին մէջ այն
անձնաւորութեանց զոր գերեզմանէն դուրս կը հա-
նեմ և ուրուականին մէջ այն անձերուն զոր կը
հարեմ: Եւ կամ պէտք է որ Հիւսնդ Ձեթերթիկին,
անօթի ու ցուրտէն փառացած Ձեթերթիկին առջև՝
կամբա յաւակնոտաբար կանգնեցնէ ուրիշ Ձեթեր-
թին մը, Հասարակութիւնը զուարճացնելու համար
վայելաշնորհ կերպով զարգարուած, և այս վերջինը
նկարագրուի առաջնոյն ձեռքով, աշուրը՝ մուրաց-
կանին ձեռքով: Այս այն երկու տեսակ բանաստեղ-
ծութիւնները որ կարելի են ինծի համար, ասկից
անդին չեմ կրնար անցնիլ: Զուարճացնել զիրենք կամ
իրենց գութը շարժել. ողորմելի պէպէհներ խաղցնել
կամ իմ անձն իսկ պէպէք մը ընել և այս կապուե-
թանքը դրամ վաստկիլ: Միտոս բանալ և հաշուասե-
ղանք մը վրայ ի սոս ցնել: Եթէ վերջերս ունի, աւե-
լի լաւ, զինը կ'աւելնայ. եթէ քիչ մը յօշուտուած է,
այ աւելի մեծ գին տալով ծախու կ'առնեն: (Ոտքի
կ'ելլէ) Ոտքի ելիլ, արարած Աստուծոյ, որ տնոր
նմանութեամբն են շինուած. ելիլ այս վիճակին մէջ
այ Հիացիլ վրայ: (Կը խնդայ ու նորէն կը նստի:
Հին ժամացոյց մը՝ պատէն կախուած՝ կէս ժամ մը
կը հնչէ, երկու հարուած):

Ձէ, չէ:

Ժամը որ կը հնչէ՝ քու պարտքդ կը վերցնէ քեզի.
նստէ և աշխատէ, ողորմելի: Ժամանակդ կը կոր-
սնցնես՝ խորհրդածելով. մէկ հատիկ խորհրդածու-
թիւն մը ունիս ընելու, այն է թէ ազգաստ ես: Կ'ի-
մանաս. աղքատ

Մտամիրոսման ամէն մէկ վայրկեանդ՝ զորութիւն
մըն է. ապարդիւն վայրկեան մըն է: Գաղափար,
ինչ արժէք ունի գաղափարը. բառն է որ դրամ կը
բերէ: Կայ բառ որ մինչև մէկ շիլին կրնայ բերել.
մոտծումը՝ հրապարակել վրայ՝ չ'անցնիլ:

Մ'չ, հեռու ինձմէ, կը պաղատիմ, հեռու ինձմէ,
նով սառուցիկ վատութիւն: Ո՛վ ինքնարհամարհանք,
զիս բոլորովին մի՛ կործանեն. մէկդի՛ դեմ. մէկդի՛
դեմ, որովհետեւ Հիմա անունս ու բնակութեան տե-
ղըս, ամէն բանս յայտնուած է. և եթէ վաղը այս
գիրքը աւարտած ըլլայ, կորսուած եմ, այո, կորու-
ած, անյոյս կերպով կորսուած. պիտի ձերբակալ-
ուիմ, գատուիմ, դատապարտուիմ, բանա դրուիմ:

Ո՛վ ստորնացում... ո՛վ ամօթալի աշխատանք,
(Կը գրէ, յետոյ կը շարունակէ խօսիլ) Ապահով եմ
որ այդ կինը զիս երբեք պիտի չսիրէ: Բայց ինչո՞ւ
ստոր կը մտածեմ նորէն:

(Երկայն լուռութիւն)

Ո՛րքան կորսնցուցի եմ հպարտութեան՝ որ դեռ
ստոր կը մտածեմ: Բայց թող ըսնէ ինծի թէ ալ
ինչո՞ւ հպարտութիւն ունենամ: Հպարտութիւն թե՛
բանի: Ո՛չ մէկ աստիճանի վրայ ոչ մէկ տեղ չեմ
բռնէր: Եւ ապահովապէս՝ զիս կանգուն պահող այս
բնական խորխորութիւնն է: Ան միշտ ականջոյ ի վար
կը պոռայ որ չլքեմ և դժբաղդի ձեւ չունենամ: Բայց
որո՞ւ համար է որ միշտ երջանիկ կը ձևանայ՝ երբ
երջանիկ չէ: Կարծեմ կ'ինքեուն համար է. ամենքս
ալ էնոց առջև միշտ բան մը կը ձևացնենք: Խեղճ
արարածներ, էտենք քեզ գահ մը կը կարծեն, ո՛վ հա-
րածանօթութիւն, զգալի հանրածանօթութիւն, զուն
որ ուրիշ բան չես բայց եթէ անարգութեան սին
մը որուն վրայ ու է և անիրազելի անցորդ կարող
է մեզ ապաւանիլ: Ընդհանրապէս, կ'ինքը կը սիրեն
այն որ մէկուն առջև գլուխ չի ծռեր: Իրաւունք ունին,
Գոնէ, սա կ'ինք որուն աչքերը վրաս են՝ գլուխ
ծուլու երբեք չալիտի տեսնէ: Ա՛խ, եթէ սիրէր զիս...

(Անձնատուր կ'ըլլայ երկայն երազանքի մը, որմէ
յանկարծ դառն կերպով կը սթափի):

Գրէ, ողորմելի, կամքդ արթնցնու: Ինչո՞ւ այդ-
քան տկար է: Դեռ չ'ըլլացաւ առաջ մէկ այդ պաշ-
տամբ միտքը զոր կը զրգո՞ւ բայց՝ մէկ կը կասի: Այս
նոր նուաստացում մը ինծի համար: Մի՞նչ. Հիմա,
ան միշտ իր տիրոջմէն առաջ ծածկայ կ'ելլէր. սանձ
մը պէտք էր. և այս իրիկուն, իթմանի պէտք ունի:
Ինչ, գուն՝ անմահ, գուն՝ հուսկու տէրը այս մարմնոյն,
սէ՛ք Միտք, անգամալուծուած ես արդեօք սա զար-
շիլի մառախուղէն որ այս քայքայուած սենեակէն

ներս կը թափանցէ. ո՛վ գոռոզ, կը բաւէ ուրեմն ընէ մը պաղ գորշոյ՝ քեզ նուաճելու համար:
(Անկողնոյն ծածկոյթն իր ուսերուն վրայ կը նետէ):

Թանձր մառախուղ, պատուհանիս դուրսը տա-
րածուած է՝ ձերմակ վարագոյրի մը նման, պատա-
քի մը նման: Այսպիսի մառախուղ մը տարածուած
էր չորս պատուհանին առջև՝ այն գիշերը որ մեռաւ:
(Ժամացոյցը կը հնչէ երեք քողորդոյ):

Նորէն: Ժամանակը կ'անցնի. և դեռ ոչինչ
գրուած է:

(Կը կարգայ):

«Հէյտու, Հէյրուտ... Տէր Աստուած, Հէյրուտ...

Ուկիլը՝ դուքսը...»

Բայց ինչ կապ ունի ինծի հետ այս հարուորը,
կ'աղաչեմ: Չեմ կրնար հասկնալ թէ ինչպէս գրե-
ր եմ ասիկա: (Խօսելով՝ ձեռագիրը կը պատռէ: Քիչ մը
զատանցանքի մէջ կ'իջնայ):

Կաթոլիկ հոգի մը ուզեցի զգեցուլ. ստեցի: Եթէ
իւրը կաթոլիկ ըլլայի, պէտք էր փանականի, թրա-
փաթի կէտանքն ընդգրկէի: Թրափաթը դազաղ մը
ունի իւր անկողին, բայց դուն կը քնանայ այնտեղ:
Բոլոր մարդիկ անկողին մը ունին ուր կը քնանան.
ես ունիմ՝ անկողին մը ուր կ'աշխատիմ՝ դրամ
վատակելու համար:

(Չեռքը դիտուն կը տանի):

Ո՛ր կ'երթամ... ո՛ր կ'երթամ՝ այսպէս... բառը
իր ետեւէն կը բաշէ գոռով կը բերէ գաղափարը:
Ո՛վ երկինք՝ լիմարութիւնը այսպէս չէ որ կը յառա-
ջանայ... Ահա բան մը որ ամենէն քաջն իսկ կարող է
հաջաբեկել: Հերէք է, հանգարտէ: Սուրիա աշքէ կ'ան-
ցընէի կոր... Այո... այս քերթուածը պէտք եղածին
չափ աւելոր չէ... ճուտ գրուած է... Ապրելու հա-
մար գրուած է: Ո՛վ չարարանք: Հէստիկոսի պա-
տերազմը... Հինաուրը Սաքսոնները... Նորածագ
Նորմանները... միթէ ստոքը կը հետաքրքրեն զիս:
Ոչ, Ուրեմն ինչո՞ւ եմ խօսեր ստոքի մասին: Երբ
այնքան բան ունիմ տեսանելուս վրայ ըսելու:

(Ուքի կ'ելլէ և մեծաբայ կը բալէ):

Պաղ մոխրիներ արթնցնել, էրբ ամէն բան կը
սարսռայ ու կը տառապի՝ շուրջս. երբ Առաքի-
նութիւնը « օգնութիւն » կ'աղաղակէ և լայէն հո-
գին բերանէ և եկած էր ամբողջ Աշխատութիւնը
արհամարհուած է, երբ Յոյսը կորոնցողած է իր
խարխալը, հաւատքը՝ իր բաժակը, Մէրը՝ իր խեղճ
զաւակները. երբ Օրէնքը անաստուած է և ապակա-
նած՝ բողի մը պէս. երբ Նրիկը կը պոռայ և ար-

դարութիւն կը պահանջէ բանաստեղծէն՝ անոնց դէմ
որոնք անոր ծոցն անդադար կը խուզարկեն իր ոս-
կին խլելու համար, և իրեն կ'ըսեն թէ առանց Եր-
կըքի կրնայ ապրիլ: Եւ ես, որ ափիս կը զգամ,
չպատասխանեմ՝ անոր: Այո, Աստուած վկայ, պիտի
պատասխանեմ: Պիտի կոխտոտեմ՝ չարքն ու կեղծա-
ւորները: Դիմակազերծ պիտի ընեմ՝ ձերեմիա-
Մայլը և Ուարթները:

Ա՛հ, որորմելի: Բայց... Երգիծանքն է աստիկա:
Չար կ'ըլլաւ կոր:

(Կուլայ երկարորէն՝ դառնամորմը):

Աւելի լաւ է գրես սա մառախուղին վրայ որ
պատուհանիդ առջև տեղադրուեր է՝ ինչպէս տեղա-
ւորուած էր չորոգ պատուհանին առջև:

(Կը լռէ: Սեղանին վրայէն ծխատուփ մը կ'առնէ):

Ահա հայրս: Ահա, դուն ես, բարի ծեր նաւազ,
աներկիւղ զինուոր-նաւապետ: Գիշերը՝ կը քնանալիք
դուն, ցորեկը կը կռուէիր. խելացի փարիս մը չէիր
ինչպէս եզաւ քու խեղճ զաւակդ: Կը տեսնես,
կը տեսնես այս ձերմակ թուղթը. եթէ վաղը ան
լեցուած չըլլայ, բանս պիտի երթամ, հայրիկս, և
զիսուս մէջ մէկ բառ մը չեմ գտներ կոր՝ այս թուղ-
թը մրոտուելու համար. որովհետեւ անթիւ եմ՝ Հաց
ձարելու համար, ծախեցի աղամանղը որ կար այս
սուրճին վրայ՝ ինչպէս աստղ մը քու աղուոր ձակ-
տիզ վրայ: Ու հիմա, հիմա, աղամանդն ալ չունիմ,
և անթիւ եմ նորէն: Եւ քու հպարտութիւնդ ալ
ունիմ, հայրիկս, որով մէկուն չեմ ըսեր անթիւ ըլ-
լաւ: Բայց դուն որ ծեր էիր և գիտէիր թէ դրամ
պէտք է ապրելու համար, որովհետեւ անթիւ եմ՝ Հաց
ինծի՝ ձգելու, ինչու ծնորդ զիս:

(Կը նետէ տուփը: Յետոյ, ետեւէն կը վազէ,
ծուկի կողայ և կուլայ):

Ա՛խ, ներէ, ներէ, հայրիկս, ձերմակ մագերով
իմ ծերուկ հայրիկս: Ա՛յնքան անգամ զիս ծուկե-
րող վրայ առած ու համբուած ես: Իմն է յան-
ցանքը. բայց կ'ապահովեմ քեզ թէ իմ անունս բառու
պիտի չերթայ: Կ'երդնան, իմ ծերուկ հայրիկս: Տես,
ափիւն ունիմ հոս. եթէ անթուրթիւնս շատնայ...
կերակուր չպիտի ուտեմ... պիտի խմեմ:

Մէկը ծանր քայլերով վեր կ'ըլլէ իմ փայտէ
սանդուխէս: Մածկեցեք այս գանձը:

(Ափիւնը կը ծածկէ):

Բայց ինչու: Ազատ չեմ: Աւելի ազատ քան եր-
բէք: Կուտան իր սուր շծածկեց: Մնացիւ ինչպէս որ
ես, Հռոմայեցի, և զուխդ բարձր բունէ:

(Ափիւնը սեղանին մէջտեղը կը դնէ):

Տ Ի Ս Ա Ր Ա Ն Բ

Ձեռքբերում, Բռնչյրը

Քառույթ. (Ափսոսի սրուակը նկատելով). — Ա՛,

Ձեռք. — Ի՛նչ կայ:

Քառույթ. — Կը ծաննամ՝ այդ հեղուկը: Ատոր մէջ՝ էն թիւը վաթսուն հատիկ կայ փոխին: Ատիկայ քեզի պիտի տայ տեսակ մը խաղափառութիւն, որ նախ բաւական համընդ պիտի ըլլայ քեզի՝ իբր բանաստեղծ, և յետոյ թիւ մը դառնանք, ու յետոյ լաւ քուն մը շատ ծանր և առանց երազի, ապահով եղիլ: Դուն երկայն ատեն մինակ ես միացեր, Ձեռքբերում:

(Փռուչքը սրուակը նորէն սեղանին վրայ կը դնէ. Ձեռքբերում զոգտուկ կ'առնէ զպէն):

Ձեռք. — Եւ եթէ ուզեմ յախտեան մինակ մնալ, չունիմ այդ իրաւունքը:

Քառույթ. — (Կը նստի անկողինի վրայ. Ձեռքբերում կանգուն կը մնայ, աչքերը սեւեռուն և դժնեհայեաց): Հեռանումները այդպէս կ'ընեն:

Ձեռք. — Թող ինծի տան մէկ ժամ երջանկութիւն, և անտգիւտ քրիստոնեայ մը պիտի ըլլամ, Ինչ որ... ինչ որ կը փխնաք, ստորիկեանները զայն կ'անտանէին բանաւոր ելի:

Քառույթ. — Ճիշտ է, և նոյն իսկ կ'ըսէին թէ մեզ կեանքին կապող պատճառները շատ ուժեղ չըլլալով, կարելի էր անկէջ բաժնով մինչեւ անգամ թէթեւ պատճառներու համար: Բայց, բարեկամս, պէտք է նկատել թէ բազմա յաճախ կը փոխուի և շատ բան կարող է ընել, և թէ, բան մը եթէ կարող է ընել, ողջերուն համար է միայն որ կարող է:

Ձեռք. — Բայց մեռածի մը դէմ ալ ոչինչ կրնայ ընել. ես կ'ըսեմ թէ ան աւելի չարիք կ'ընէ քան բարիք, և անխելութիւն չէ անկէջ փախչիլը:

Քառույթ. — Իրաւունք ունիս: Միայն թէ ատիկա քիչ մը փախկոտ ընթացք մըն է: Երթալ՝ անկէջ փախնալով՝ խոշոր քարի մը տակ, մեծ ծակի մը մէջ պահուելով, վատութիւն է:

Ձեռք. — Դուք կը ծաննաք շատ վատեր որ ինքզինքնին սպանած ըլլան:

Քառույթ. — Ենթոյն հերիք է:

Ձեռք. — Ես չեմ հաւատար անոր վատութեանը: Այդ մը վատեր չի սիրել: և կայրի միակ անունն է ատ՝ որ ժողովրդական է դարձած Իտալիոյ մէջ:

Քառույթ. — Ատիկա ցոյց կուտայ թէ Ի՛նչ տեսակ բան է ժողովրդականութիւնը: Բայց, արդէն, բնաւ քեզի հետ հակաճառել չէ միաց: Աղէկ կ'ընես քու ծրագրիդ հետեւելով, որովհետեւ ատիկա քու ոտիւն

ներուդ մեծ հաճոյք պիտի պատճառէ: Անոնց մէջ պիտի գտնուին այնպիսիներ որ բաւական ամբարշտ պիտի ըլլան մահդ խեղկատակ ձեռով մը պատմելով հասարակութիւնը զբոսցնելու համար: Եւ ինչ որ անոնք երբեք չպիտի կարենային ընել, դուն կ'ընես անոնց համար. կ'անհետանաս: Աղէկ կ'ընես՝ անոնց ձեռքով քու բաժնիդ այդ փառքի սնամէջ ոսկորէն զոր ամենեղ կը կրծէք: Վեհաձն է վարմունքը:

Ձեռք. — Ինծի աւելի կարեւորութիւն կուտաք քան ինչ որ կ'արժեք: Ո՛վ զիտէ անունս:

Քառույթ. (Մեկուտի) — Այդ լարը դեռ կը թրթրուայ կոր: Տեսնենք արդիւնք մը կրնամ քաղել անկէջ: (Ձեռքբերում) Անունդ՝ ճիշդ ծածկել ուզած ըլլալով համար՝ շատ աւելի ծանօթ է ամէն տեղ:

Ձեռք. — Իրան: Գոհ եմ ատիկա գիտնալուս: Լաւ, ուրեմն մահուանէս յետոյ աւելի ազատութիւն պիտի արտասանեն զայն:

Քառույթ. — (Մեկուտի) Բոլոր ծամբաները զինքը իր սեւեռեալ զաղափարին կ'առաջնորդեն: (Բարձրաձայն) Բայց ինծի այնպէս երեցաւ այս առտու թէ բան մը կը յուսալիլ նամակէ մը:

Ձեռք. — Այո, նամակ մը գրած էի իրոք քաղաքապետին, Պ. Պէքֆորտին, որ բաւական մտեւմական յարաբերութիւն ունեցած է Յորս հետ: Շատ անգամ ինծի առաջնորդած էին որ իմ պաշտպանութեանը դիմեմ, միշտ մերժած էի, որովհետեւ չեմ ախորժող պաշտպանեալ մը ըլլալ: Յուսա զաղափարներու վրայ դրած էի՝ ապրելու համար: Ի՛նչ յիմարութիւն երեւանոնք ամենքն ալ զիս լքեցին. մէկ հատ մը միայն մնաց, պաշտպան ըլտած բանը փորձել:

Քառույթ. — Պ. Պէքֆորտ Լոնտոնի ամենէն պարկեշտ մարդը և ամենէն լուսամտներէն մին կը համարուի: Լաւ ես ըրեր: Ինչո՞ւ ես կը կենաս հիմա այդ գաղափարէն:

Ձեռք. — Մարդ մը տեսայ անկէջ ի վեր, և այդ տեսնելս բաւեց:

Քառույթ. — Խենթ մը տեսնելէն յետոյ խելօք մը տեսնելն ալ փորձէ: Ի՛նչ կը կորսնցնես:

Ձեռք. — Բայց ինչու այդ յապաղումները երեւալ կայտնեան մարդիկ յախտնալէս կը իռաչուին. հեղուկութիւնը և թշուառութիւնը իրենց զամերն են: Ինչո՞ւ կ'ուզէք որ ուրիշ գամ մըն ալ միտուի մարմնոյս մէջ, — պարապ տեղը ստորեացած ըլլալու խղճի խնայթը: Կ'ուզեմ բանաւորապէս դուռն հիլլել:

Քառույթ. — (Ուրիշ կ'ըլլէ). Թող Տէրը ներէ ինծի ինչ որ պիտի ընեմ հիմա: Մտիկ ըրէ: Ձեռքբերում, ես շատ ծեր եմ, ես քրիստոնեայ եմ, և Քրիստ

տասի տիեզերական Հանրապետութեան ամենէն մաքուր աղանդին կը պատկանէին: Իմ ամբողջ կեանքս եղբայրներու հետ խոկման, սիրոյ և ազօթի մէջ անցուցած եմ: Յանուն Աստուծոյ, ճշմարիտ բան մը պիտի ըսեմ քեզի, և ասիկա ըսելով՝ քեզ ազատելու համար՝ իմ ձերմակ մագերուս վրայ արատ մը պիտի դնեմ:

Ձեթըրթըն, Ձեթըրթըն, կրնաս թու հոգիդ կորսնցընել, բայց իրաւունք չունիս երկու հոգի կորսնցընելու: Սրդ, կայ հոգի մը որ թու հոգիիդ կապուած է և զոր թու դժբաղդութիւնդ դէպ ի քեզ քաշեց՝ ինչպէս Սկովտացիք կ'ըսեն թէ յարզը իրեն կը քաշէ ճաճանջաղող աղամանը: Եթէ դուն մեռնիս, էն ալ պիտի մեռնի. և ճիշդ քեզի պէս, առանց երկնաշէնոյ վիճակի մը մէջ դառնուիլու, յաւիտենապէս անբաժան՝ Աստուծոյ առջեւ երևայու:

Ձեթըրթըն, Ձեթըրթըն, դուն կրնաս յաւիտենականութեան մասին տարակուսիլ. բայց էն չի տարակուսիր. դուն պիտի դատուիս՝ թու դժբաղդութիւններդ և յուսահատութիւնդ ի նկատի առնուելով, և կրնաս մեղքիդ թողութիւն յուսալ. բայց ոչ էրեւակաւ, որ երջանիկ էր և բոլորովին քրիստոնեայ: Տղաս, ահա ծունկ չըսած կ'աղայեմ որ դիմաս էնոր, որովհետեւ այս աշխարհիս վրայ էն ինձի համար զաւկի պէս է:

Ձեթ. — Աստուած իմ. բարեկամս, հայրս, ինչ ըսել կ'ուզեք... Արգիծք... ոտքի ելէք... կ'ամացնեք զիս... Արեծք...

Քառէ. — Գթմ, վասն դի եթէ դուն մեռնիս, էն ալ պիտի մեռնի...

Ձեթ. — Բայց ո՞վ, ո՞վ...

Քառէ. — Որովհետեւ էն մարմնով և հոգիով տկար է, սրտովը միայն ուժեղ:

Ձեթ. — Ընտել տուէք... կրնայիք երբեք կարծել...

Քառէ. — (Ոտքի կ'ելէ). Եթէ երբեք իրեն ըսես այս զաղանիքը, զաւաճան մը կ'ըլլաս: Այն ատեն անձնասպանութեան պէտք չես ունենար. ես կը սպանեմ քեզ:

Ձեթ. — Ուրեմն...

Քառէ. — Այո, իմ հին բարեկամս, թու տանտիրոջդ կիներ... այն աղուոր տղաքներուն մայրը:

Ձեթ. — Քիթթի Պէլլը:

Քառէ. — Կը սիրէք քեզ. տղաս: Կ'ուզես հիմա ինքզինքդ սպաննել:

Ձեթ. — (Քուէյքըրին բազուկներուն մէջ իյնալով). Անոյ, ուրեմն ալ և ոչ ապրիլ կրնամ, ոչ մեռնիլ:

Քառէ. — (Կորովի շեշտով մը). Պէտք է ապրիլ, լուր և ազօթի Աստուծոյ:

Տ Ե Ս Ա Բ Ա Ն Գ.

(Առաջին արարուածին տեղում)

Բիթթի Պէլ. Քուէյքըր

Ք. Պէլ. — (Առանձին, դուրս կ'ելլէ իր սենեակէն և սրահին մէջ շորս կողմը կը նայի). Մտոր չկայ, Եկէք, գաւկներս:

Մտոր երբեք ծածուկ բան ընելու չէ, բայց ի միայն երբ բարեգործութիւն մը կ'ընենք:

Շուտ, քաշէք իր սենեակը, տարէք իրեն... (Քուէյքըրին). Հիմա կուգամ, բարեկամս, հիմա կուգամ ձեր ըսիկքը լսելու. (իր գաւկներուն) Տարէք իրեն ձեր բոլոր պատուները: Մի՛ ըսէք որ ես եմ ձեզ ղլկողը, և վեր ելած ատենիկդ աղմուկ մի՛ հանէք:

(Սրկու տղաքը, կողով մը բռնած, կամաց կամաց վեր կ'ելլեն սանդուղէն և Ձեթըրթընի սենեակը կը մտնեն):

Շատ լուս. Եպրիք:

(Նրբ արգէն վերն են ու սենեակը մտած են, զառնալով Քուէյքըրին).

Ուրեմն կը կարծեք, բարեկամս, թէ լորտ-քաղաքապետը պիտի օգնէ իրեն: Օ՛հ, բարեկամս, պատրաստ եմ ընելու ինչ որ խորհուրդ տաք ինձի:

Քառէ. — Այո, պէտք պիտի ըլլայ որ քիչ ատենէն երթաչ ուրիշ տուն մը բնակի, թերեւ իսկ Լոնտոնէն դուրս:

Ք. Պէլ. — Օրհնեալ ըլլայ այն տունը ուր ան երջանիկ պիտի ըլլայ, քանի որ չի կրնար երջանիկ ըլլալ իմ տան մէջ: Բայց թող ապրի, ատիկայ հերիք է ինձի:

Քառէ. — Հիմա այդ որոշման մասին պիտի չխօսիմ իրեն. կամաց կամաց պիտի զինքը պատրաստեմ ատոր:

Ք. Պէլ. — (Վախ ցոյց տալով որ Քուէյքըրը իր առաջարկը չընդունի). Եթէ կ'ուզեք, ես խօսիմ իրեն՝ այդ մասին:

Քառէ. — Ձե. դեռ շատ կանուխ է:

Ք. Պէլ. — Բայց եթէ, ինչպէս կ'ըսեք, իրեն համար պարզապէս սովորած մէկ տեղէն հեռանալ մըն է...

Քառէ. — Անշուշտ. շատ վայրենի է: Հեղինակները միմիայն իրենց ձեռագիրները կը սիրեն... սիրտը՝ մէկուն կապուած չէ. մէկը չխօսիր... բայց կանուխ է դեռ:

Ք. Պէլ. — Ինչո՞ւ կանուխ ըլլայ, քանի որ կը

կարծեք թէ իր այստեղ գտնուելը նայեցան աղետաբեր է:

Քուէ. — Այո՛, այդ է կարծիքս: Ըսածս ետ չեմ աներ:

Ք. ՊԵԼ. — Սակայն, եթէ պէտք է, պատրաստ եմ հիմա հնո ըսել իրեն ասիկա:

Քուէ, Քուէ. — Ձէ, չէ, եթէ հիմա ըսես, շատ գէշ կ'ըլլայ արդիւնքը:

Ք. ՊԵԼ. — (Գոհ) Ուրեմն, բարեկամս, ընդունեցէք որ, եթէ հոս մնայ, չեմ կրնար հետը գէշ վարուիլ. պէտք է վերջապէս որ ջանանք զինքը նուազ դժբաղ ընել: Զաւակներս դիպեցի որ թէ մը զբոսցնեն զինքը. և ուզեցին անպատճառ անոր տանիլ իրենց նախաձառչի մասը, իրենց պատուները: Ասիկա մեծ ոճիր մըն է ինծի համար, ոճիր մըն է զաւակներուս համար:

(Քուէ, Քուէ, նստելով, գլուխն անդին կը դարձնէ՝ արցունք մը սրբելու համար:

Ք. ՊԵԼ. — Ուրեմն կ'ըսեն թէ շատ աղուր դիրքեր դրած է: Կարգացրի էք իր դիրքերը:

Քուէ, Քուէ. — (Կեղծ անտարբերութեամբ մը) — Այո՛, գեղեցիկ հանձար մըն է:

Ք. ՊԵԼ. — Եւ այսքան երիտասարդ տարիքի մէջ... կարելի բան է: Ա՛, չէք ուրիշ պատասխանել: Իրաւունք չունիք, որովհետեւ ես ձեր ըսածներէն մէկ բառ չեմ մոռնար: Այս առժող տօրնակի համար, չէ մի որ ինծի ըսիք թէ աղքատ մարդու մը բրած մէկ նուէրը իրեն ես դարձնելը. զինքը վիրաւորել է իր ամբողջ թշուառութիւնն իրեն զգացնել է: Հետեւաբար, ապահով եմ որ իր Աստուածաշունչը իրեն ետ չէք դարձուցած: Զի՞դ չէ՞. խոստովանեցէ՛ք:

Քուէ, Քուէ. — (Աստուածաշունչը տալով էնոր) . — Ա՛, դաւախ. քանի որ ես եմ քեզի տուողը, կրնաս պահել:

Ք. ՊԵԼ. — (Քուէ, Քուէ, իր աստուածաշունչը տալով, կը նստի, պզտիկ տղոց ձեռով որոնք շուրջ մը կը խնդրեն), Ո՛հ, բարեկամս, հայր, ձեր բարութիւնը երբեմն չար ձեւ մը ունի, բայց միշտ լաւազոյն բարութիւնն է: Դուք մոռնէ վեր էք ձեր խոհեմութեամբ. կարող էք ձեր ստեղծութեան ասկ տեսնել մեր բոլոր քիբրիկ փոթորիկները զոր զուգ կ'արհամարհէք, և ասկայն առանց աննայմէ ֆրաստելու՝ կը խառնուիք անոնց, կը տառապիք աննայմով՝ ձեր ներողամտութեանը պատճառով, ու յետոյ քանի մը բառ կը նետէք, և ամպերը կը փարատին, և մենք ձեզի երախտագիտութիւն կը յայտնենք, և արցունքները կը սրբուին, և

կը ծպտենք, որովհետեւ դուք թո՛ղ կուտար:

Քուէ, Քուէ. — (Զենիկա ծախելէն համարուելով) . — Զաւակս, սիրելի գաւակս. գոնէ քեզի հետ՝ այսպէս վարուելուս ապահով եմ որ երբեք չպիտի զղձամ: (Դրսէն՝ խօսելու ձայն կը լսուի): Մէկը կուգայ... Երանի թէ իր բարեկամներէն մին չըլլար: Ա՛, այդ Թէլպօթն է. ապահով էի: (Որսական սրափողի ձայն կը լսուի):

S B U D F U N T

Նոյնի, Լորս Թեյպոթ. ձօն Պէլ

Լորս Թեյպ. — Այո՛, այո՛, պիտի երթամ անոնց բոլորին բանձ որ միանան ու գուարճանան: Եո, ա՛լ սիրտ չունիմ գուարճանալու: Երեսներն տեսնելու այլ ես փափաք չունիմ. թող առանց ինծի ընթերն: Բաւական զուարճացալ տեսնելով որ ինչպէս ամբողջ ունեցածներն կը մսխէին՝ ինծի հետեւի փորձելով: Հիմա, այդ խաղը ա՛լ կը ձանձրացնէ զիս Պարոն Պէլ, խօսելիք ունիմ ձեզի: Ինծի չէիք ըսած իմ Ձէթըրթըն բարեկամիս ցաւերն ու աղքատութիւնը: Ճ. ՊԵԼ. (Քիթթի Պէլին) Տիկին Պէլ, միջ միմակ ձեզից հարկաւոր է, վայրկեան մը:

(Քիթթի Պէլ իր սենեակը կը քաշուի յամբարացի): Բայց, միլրտ, եթէ ցաւեր ունի, եո ի՜նչպէս գիտնայի. գայով իր աղքատութեանը, սաչափը գիտեմ որ այստեղ բնաւ պարտք չունի:

Լորս Թեյպ. — Տէր Աստուած, ի՜նչպէս մէջէն կ'իլլէ: Ա՛, եթէ գիտնայիք, և դուք ալ, բարի Քուէ, Քուէ, եթէ գիտնայիք ինչ որ հիմա րուպէ մը առաջ ինծի իմացուցին...: Նախ, իր գեղեցիկ քերթուածները պատառ մը հաց իսկ չեն տուէր. իրեն: Ասիկա շատ պարզ է. քերթուածներ են, և այդ քերթուածները գեղեցիկ են. բնական է որ այդպէս պիտի ըլլար: Յետոյ, բանասէրի պէս բան են, անձանք ու չար ողորմելի մը, հրատարակեք է վերջերս (Աստուած տայ որ ինքը չիմանայ) զգուշիկ զրպարտութիւն մը: Թաւակներ է ապացուցանել թէ Հեռոյցին և իր միւս բոլոր քերթուածներուն բուն հեղինակը ինքը չէ: Բայց ես ատոր հակառակը պիտի հաստատեմ, և որ իմ գրելու քիբրիկն է որ այդպէս պիտի հաստատեմ, զրաւս պիտի տպեմ, և պիտի ստորագրեմ անունովս, Թէլպօթ:

Քուէ, Քուէ. — Ապրիլ, պարոն:

Լորս Թեյպ. — Բայց դեռ ուրիշ բան ալ կայ: Սքիլերն անուն մարդու մը այստեղ գալ սքեթալը

չձ ԳԵԼ. — Այո, այո, գիտեմ. Հարուստ կալուածատէր մըն է որ շատ տուներ ունի Լոնտոնի մէջ:

ԼԵՐԹ ԹԵԼՂ. — Ճիշդ այդ մարդը

չձ ԳԵԼ. — Երէկ եկաւ Հոս:

ԼԵՐԹ ԹԵԼՂ. — Ահա այս մարդը Ձէթըրթընը կը փնտռէ զայն ձերբակալել տալու համար. ինք որ երեք միլիոն ունի, կ'ուզէ զայն բանտ դնել տալ՝ տան վարձքի խնդնով զուամբի մը համար զոր ան դեռ չէ կրցեր վճարել: Եւ Ձէթըրթըն... Օ՛հ, ասիկա սոսկալի բան է...: Ասիկա այնքան ամօթալի բան մըն է մեր երկրին համար, որ կ'ուզէի այնքան ցած ձայնով ըսել որ օդն անկամ չիմտանայ: Մօտեցէք երկուքդ ալ: Ձէթըրթըն, կարենալու համար անոր րուսնէն դուրս ելլել, զրաւոր և ստորագրուած խոստում է տուեր անոր—օ՛հ, կարողացի...—որ այս ինչ օրը (և այդ օրը կը մօտենայ) իր պարտքը պիտի վճարէ, և թէ՛ այդ օրէն առաջ եթէ մեռնի, վիրաւ բուժական վարժարանին կը ծախէ... Բա, մարդուն բերանը առաջ չերթար ըսելու... կը ծախէ իր մարմինը՝ որպէս զի այդ զուամբով իր պարտքը վճարուի, և միլիոնատէրը ընդունել է այդ զրուսիւնը:

ՔԻԼԵՅ. — Ո՛վ թշուառութիւն, վաճմ թշուառութիւն:

ԼԵՐԹ ԹԵԼՂ. — Չմտածեցիք այդ մասին. առանց իր գիտելալուն՝ բոլոր իր պարտքերը պիտի վճարեմ. բայց հանդարտութիւնը զոր կ'ըցեր է պահել, ինչպէս կարելի է ըմբռնել:

ՔԻԼԵՅ. — Ու իր Հպարտութիւնը, բարեկամ, ինչպէս չես ըմբռնել:

ԼԵՐԹ ԹԵԼՂ. — Ե՛, պարոն, ես զանիկա ձենէ առաջ կը ծանչնայի: Ո՛ւր է ինքը. կ'ուզեմ տեսնել: Գիտեմ թէ ինչ ձևով խօսելու է Հետո: Պէտք է զինքն ստիպել որ իր ապագայով զբաղի... և արդէն կայ բան մը զոր պարտաւոր եմ դարձանել:

ՉՁ ԳԵԼ. — Վայն եղովից արմատ, աս ինչ խայտառակ գործ մը կ'ըսէ ասիկա: Ձիւքը ձեզի Հետ, միշտ, այնքան մտերիմ տեսնելով, կարծեցի թէ ճշմարիտ ձենթիմէն մըն էր. այդ բոլոր բաճկենիկ տան մէջ կրնան խաղալութիւն մը յառաջ բերել: Շիտակը կ'ուզէր. կը փափաքեմ որ հաճիք այդ երկտառարդին խնայնել թէ՛ ալ մէկ ամիսէն աւելի չի կրնար Հոս մնալ:

ԼԵՐԹ ԹԵԼՂ. (Դառն ժպտով մը) — Ա՛յ ատոր խօսքը չընենք, պարոն: Կը յուսամ որ իմ տունս, եթէ Հաճի գալ, ձեր տանը տեղը կրնայ բռնել:

Ք. ՊԵԼ (Ներս կը մանէ երկնոստար) — Նորին Վսեմութեան մեկնելէն առաջ, կը փափաքէի բան մը Հարցնել իրեն, Պ. Պէլի թոյլտուութեամբ:

ՉՁ ԳԵԼ. (Սեեսեակին խորը վեր վար քալելով) .

— Իմ թոյլտուութեանս պէտք չունիս. ըսէ ըսելիքդ:

Ք. ՊԵԼ. — Միլորտը կը ծանչնայ արդեօք Պ. Պերֆորտը, Լոնտոնի քաղաքագետը:

ԼԵՐԹ ԹԵԼՂ. — Հարեալ կը ծանչնամ, տիկին, նոյն իսկ կարծեմ քիչ մը ազգական ենք. զինքը կը տեսնեմ ամէն անգամ որ կը կարծեմ թէ դիս Հպիտի ձանձրացնէ, այսինքն տարին անգամ մը: Միշտ ինձի կ'ըսէ թէ պարտքեր ունիմ. ինձի համար՝ ապուշին մէկն է. բայց ընչհերթապէս կը յարգեն զինքը:

Ք. ՊԵԼ. — Պ. Տըքթըրը ըսաւ ինձի թէ այդ պարոնը իմաստուն և բարեգործ անձ մըն է:

ԼԵՐԹ ԹԵԼՂ. — Շիտակն ըսելով, ու լքօրէն խօսելով, Անգլիոյ ամենէն պարկեշտ մարդն է: Եթէ իրմէ բան մը ուզելու միտք ունիք, այս իրիկուն իսկ կ'երթամ կը տեսնեմ զինքը:

Ք. ՊԵԼ. — Այստեղ, կարծեմ կայ մէկը որ իրեն Հետ գործ մը պիտի ունենայ, և... (Այս միջոցին Ձէթըրթըն իր սենեակէն վար կ'իջնէ երկու տղաքներուն Հետ)

ՉՁ ԳԵԼ. — Ի՛նչ ըսել կ'ուզես: Խնեթ ես:

Ք. ՊԵԼ. (Թոնարհութիւն մը ընելով) — Քանի որ չես ուզեր, չեմ ըսեր:

ԼԵՐԹ ԹԵԼՂ. — Բայց ձեզեցէր որ խօսի:

ՔԻԼԵՅ. — Միակ միջոց որ կը մնայ Ձէթըրթընին, այդ մարդուն պաշտպանութիւնն է:

ԼԵՐԹ ԹԵԼՂ. — Ձէթըրթընին համար է: Ամբշապէս երթամ ուրեմն:

ՉՁ ԳԵԼ. (Իր կնոջը) — Բայց ինչպէս իր գործերը այսքան աղէկ զվտես:

ՔԻԼԵՅ. — Ես իրեն ըսի:

Չ. ՊԵԼ—Եթէ երբէք . . .

Ք. ՊԵԼ. — Կիրք մի՛ ելլեր Նորէն. մինակ չենք:

Չ. ՊԵԼ. — Ա՛յ այդ երիտասարդին խօսքը Հպիտի ընես:

(Ձէթըրթըն որ երկու տղաքը իրենց մօրը ձեռքը յանձնած է՝ դէպ ի շքմիւնէն կ'ուզողով):

Ք. ՊԵԼ. — Քու կամեց թող ըլլայ:

Չ. ՊԵԼ. — Միշտ, ահա ձեր բարեկամը. իր զգացումները իրմէ կարող էք իմանալ:

Տ Ե Ս Ա Բ Ա Ն Ե

Ձերորբորն, Լորս Թեյպոր, Քուեյբոր,
ձօն Պեյ, Գիթթի Պեյ.

(Ձեթըթըն հանդարտ և գրեթե երջանիկ ձև մը ունի: Թեկնաթուփ մը վրայ կը նստէ բանի մը ձեռագիր)

Լ. Թեւշ. — Թոմ, քեզի ծառայութիւն մը մատուցանելու համար նորէն եկայ հոս. թոյլ կուտան:

Չեթ. — (Չայնին մէջ տղու մեղմութիւն մը դնելով և ամբողջ տեսարանին միջոցին անդադար Քիթթի Պեյին նայելով). — Պիտի համակերպիմ, ձորձ, ամեն բանի, գրեթե ամեն բանի:

Լ. Թեւշ. — Այդ Սքիրնեք ըստած սրիկային հետ ձակարդ գործ մը ունիս եղբեր: Կ'ուզէ կոր վաղը քեզ ձերբակալել տալ:

Չեթ. — Ձեի գիտեր. բայց իրաւունք ունի:

Ճ. Պեւ. (գուկեքըն). — Միտրտը շատ բարի է որ կը հանդուրժէ. արևոր ամբարտաւան ձեռ նայեցէք:

Լ. Թեւշ. — Իրաւունք ունի:

Չեթ. — Իրաւունք ունի՝ օրէնքին համեմատ: Երէի պէտք էր որ վճարէի պարտքս. այդ վճարումը պիտի ընէի ծախելով ձեռագիր մը որ չէ աւարտած. այդպէս խոտացած եմ գրաւորագրէս. եթէ ցաւեր ունեցայ, եթէ ներշնչումը որդեալ ժամուն չեկաւ, առ անոր գիտնալիք բարեւ չէ:

Այո, պէտք չէր որ այդ աստիճան իմ ուժերուս վրայ յոյս դնէի և մոռայի մը զարուս ու մեկնելուն թուականը ճշդէի ինչպէս ձիւս մը վաղը կը հաշուեն: — Յարգանքի պակաս մըն է որ ունեցայ իմ անմահ չղոյիկ նկատմամբ, զայն ժամով վարձու տուի եւ ծախեցի: — Ես եմ յանցաւորը. արծառի եմ զըլխուս գալիքին:

Քուեյ. — (Գիթթիին). — Դրաւ կը դնեմ որ ասոնք զինքը խենթ կը կարծեն հիմա. ըսածները չափազանց գեղեցիկ են իրենց համար:

Լ. Թեւշ. — (Խնդալով, բայց քիչ մը վերաւորուած). — Իմ կարծիքս ըլլալէ վախճալու համար է որ զինքը կը պաշտպանես:

Ճ. Պեւ. — Այո, պարզապէս ըսածնուզ հակառակն ըսելու համար է:

Չեթ. — Ո՛հ, հիմա կը մտածեմ թէ ամէնքը իրաւունք ունին, բայց ի բանաստեղծներէն: Բանաստեղծութիւնը ուղեղի հիւանդութիւն մըն է, իմ մատիս չէ որ կը խօսիմ. ես բժշկուած եմ:

Քուեյ. — (Գիթթիին). — Այս ըսածը վրաս գէշ կ'ազդէ:

Չեթ. — Ա՛յ մէկ հատիկ ոտանաւոր մը պիտի չգրեմ, կ'երդնում. ինչ ալ պատահի, մէկ հատիկ ոտանաւոր մը պիտի չգրեմ:

Քուեյ. — (Աչքը անոր վրայէն չզատելով). — Հըմ. նորէն տկարացեր է:

Լ. Թեւշ. — Ճ՛րէշ է որ յոյս գրած ես Պ. Պեք-Փորտին վրայ, որ ազգականս է: Կը զարմանամ որ աւելի իմ վրաս յոյս գրած չըլլաս:

Չեթ. — Լորտ-քաղաքապետը ինծի համար կառավարութիւնը ըսել է, և կառավարութիւնը՝ Անգլիան է, միւրտ. Անգլիոյ վրայ է որ յոյս գրած եմ:

Լ. Թեւշ. — Հակառակ այս բոլորին, իրեն պատուաստ եմ ըսելու ինչ որ ուզես:

Ճ. Պեւ. — Արծառի չէ, շիտակ:

Քուեյ. — Ահա պաշտպանութեանց մրցում մը: Մեր լորտը աւելի պիտի ուզէ պաշտպանութիւն շընորհել քան երիտասարդ լորտը: Թերեւս արդիւնքը օգտակար ըլլայ:

(Կառքի թաւաման ձայն մը կը լսուի գրանէն):

Ք. — Կարծես թէ կառքի ձայն մը կ'իմանամ:

Տ Ե Ս Ա Բ Ա Ն Ե

Նոյնի և Պիթթի

(Երիտասարդ լորտերը վար կ'իջնեն անձեռոցները ձեռքերին և որսի զգեստներով, լորտ-քաղաքապետը տեսնելու համար: Վեց սպասաւոր ջահեր կրելով կը մտնեն ներս և երկու կարգ կը շարուին լորտ-քաղաքապետին զարուսը կը ծանուցանեն):

Ք. Պեւ. — Ինքն իսկ, լորտ-քաղաքապետը հոս կուգայ, Պ. Չեթըթընին համար: Ռաշէլ, գաւակներս, ինչ երջանկութիւն, համբուրեցէք զիս:

(Կը վազէ անոնց մօտ և կը համբուրէ գանոնք եռանդով),

Ճ. Պեւ. — Կիները անբացատերելի խենթութեան վայրկեաններ ունին:

Քուեյ. — (Մեկուտի) Մայրը՝ առանց գիտնալու՝ սիրուհիի համբուր մըն է որ կուտայ իր գաւակներուն:

Պ. Պեթ. (Բարձրաձայն խօսելով և ծանր ու վեհապան ձևով մը թիկնաթուփ մը մէջ տեղաւորուելով). — Ա՛յ, կարծեմ այն ամենքը որ մէկտեղ կ'ուզէի տեսնել՝ հոս են: Ա՛յ, ձօն Պեյ, հաւատարիմ բարեկամս, կ'երևայ թէ ձեր տան մէջ ապրիլը հա-

ձեռք է. որովհետև հոս կը տեսնեմ՝ զուարթ դեմքեր որունք աղմուկը և անկարգութիւնը պէտք եղածէն աւելի կը սիրեն : — Բայց իրենց տարիքին բեր- մունքն է :

Ճ. Պէւ. — Միլիւրտ Ձեր Վսեմութիւնը շատ բարի է որ երկրորդ անգամ իմ տունն գալու պա- տիւր կ'ընէ ինձի :

Պ. Պէւֆ. — Այո, շիտակ է, Պէւ, բարեկամս, երկրորդ անգամն է որ կուգամ... Ա՛, ի՛նչ աղօթիկ գաւաիկներ ունիք : Այո, երկրորդ անգամն է : Առաջին անգամը՝ եկա ձեր մանիֆաթութեան կործարաննե- րուն մասին ձեզի շնորհաւորութիւններս յայտնելու : Եւ այսօր այս տունը աւելի քան երբեք զեղեցիկ կը գտնեմ : Ձեր խաթունիկ կնիկն է որ այս բոլորը կարգի կը դնէ ապրիլ : — Թէպէտ քուզէնս, ինչո՞ւ բերանդ չես բանար : Խանգարեցի քեզ. բարեկամնե- րուդ չես զուարճանալու վրայ էիք, այնպէս չէ : Թէպէտ քուզէնս, դուն զուարճանալէն ուրիշ բան չես գիտեր. բայց տարիքիդ բերմունքն է :

Լ. Կ. Թէւ. — Ինձմով մի՛ զբաղիք սիրելի լրտու : Լ. Կ. Լաւաշ. — Ըմէն օր մենք այդ կ'ըսենք իրեն :

Պ. Պէւֆ. — Դո՛ւք ալ, Լաուտըրտէյ, դո՛ւք ալ, Քիկիսթըն, մի՛շտ իր չտեղ, մի՛շտ զիշերները կ'ան- ցնէք երգելով, խաղալով ու խմելով : Ամենքդ ալ դէ՛շ պիտի վերջանաք : Բայց ըսելիք չունիմ. ամէն մարդ իրաւունք ունի իր չարտութիւնը ուղածին պէս փառնելու. — չօն Պէւ, ձեր տանը մէջ կը բնակի, անպէս չէ, Ձեթըթըն անունով երիտասարդ մը, որուն համար ուղեցիք անձամբ գալ հաս :

Չէթ. — Ես եմ, միլիւրտ, որ նամակ գրեցի ձեզի :

Պ. Պէւֆ. — Ա՛, դուն ես, սիրելի պարոն : Սանկ մօտս եկելու նայիմ, քիչ մը երեւոյ տեսնեմ : Հայրդ ձանցած եմ. պատուական մարդ՝ որ այ՛նչափ կրնայ ըլլալ : Լըգարտ դիւնուր մը որ կամայ կամայ յա- ռաջացեր ու դիրքի հասեր էր : Ա՛, դուն ես Թոմաս Ձեթըթընը : Ատենդ ոտանաւոր գրելով կ'անցունես եղբի հա : Մէկ անգամը հոգ չէ, բայց պէտք չէ շա- րունակել, մարդ չըկայ որ այդ յիմարութիւնը ըրած ըլլայ : Հէ՛ հէ՛, ես ալ քեզի պէս եմ՝ ըրած երիտա- սարդ եղած ատենս, և ոչ Լիթլըթըն, ոչ Սուիֆթ, ոչ Ուալթը չեն կրցած երբեք զեղուհիներուն համար գրել սոսանաւորներ որ իմ գրածներէս աւելի կնա- հած ու սրամիտ ըլլային :

Չէթ. — Ձեմ տարակուսիք, միլիւրտ (հեգնաբար) :

Պ. Պէւֆ. — Բայց պարապ ժամերս է միայն որ

կուտայի Մուսաներուն : Դիտէի ինչ որ Պեն ձօնարն կ'ըտէ այդ մասին, այսինքն թէ աշխարհիս ամենէն զեղեցիկ մուսան մարդուս փորը չի կշտացներ, և թէ այդ օրիորդները իբր սիրուհի առնելու է և երբեք իբր ամուսին :

(Լաուտըրտէյ, Քիկիսթըն և լրտուներ կը խնդան)

Լաւաշ. — Ապրիլ, միլիւրտ, շատ ծիշդ է :

Բաւէ. — (Մեկուտի). — Կ'ուզէ կոր գայն մաղ-

մաղ կրակի վրայ մեռցնել :

Չէթ. — Ընչ, շատ ձիշդ է. միլիւրտ. այգպէս

ըլլաւ աչոր կը զգամ :

Պ. Պէւֆ. — Բու գիտուք եկածը հապարաւոր երի- տասարդներու գլխուն եկած է. ուրիշ բան չես կրցած ընել մինչև հիմա բայց եթէ այդ անիծեալ ոտաւոր- ները գրել և ինչի կը ծառայեն, ըսէ կ'աղաչեմ. տես, հօր պէս կը խօսիմ կոր քեզի ինչի կը ծա- ռայեն : Լաւ Անգլիացի մը իր երկրին օգտակար ըլլալու է : Ըսէ տեսնեմ, ինչ կերպով կ'ըմբռնես մեր ամենուս պարտականութիւնները :

Չէթ. — (Մեկուտի). — Էնոր սիրոյն, Էնոր սի- րոյն, պիտի խմեմ բաժակը մինչև մրուր : (Բարձ- րաձայն) : Կարծեմ թէ կը հասկնամ այդ պարտա- կանութիւնները, միլիւրտ : Անգլիան նաւ մըն է : Մեր կղզին նաւու ձև ունի արդէն, ցուպը դէպի հիւսիս դարձած, ծովերուն մէջտեղը՝ կարծես խարխիս է նե- տած, աչքը աշխարհիս վրայ տնկած : Անգղադար իր կող- բէն կը հանէ ուրիշ նաւեր իր նմանութեամբ շինուած, և որոնք կ'երթան զայն ներկայացնել աշխարհիս բոլոր ծովափունքներուն վրայ : Բայց մեծ նաւուն վրայ է որ մեր ամենուս բուն գործը կը գտնուի : Թագա- ւորը, լրտուները, համայնքները՝ դրօշակին, դէպին և կողմնացոյցին կը հսկին. մենք ամենքս պարաններով զբաղելու ենք, կաշմերուն վրայ մագլցելու, առա- գաստները պարզելու և թնգանութիւններ լցնելու ենք, և մեր փառաւոր նաւը վարելու գործին մէջ չկայ մէկը որ անօգուտ ըլլայ :

Պ. Պէւֆ. — Կէշ չէ, գէշ չէ, թէպէտ նորէն ըսածիդ մէջ բանաստեղծութիւն կայ : Բայց նոյն իսկ ընդունելով այդ զաղափարդ, կը տեսնես որ նորէն իրաւունք ունիմ : Ի՛նչի կը ծառայէ բանաստեղծը՝ նաւը վարելու գործին մէջ :

(Վայրկեան որ սպասուած)

Չէթ. — Աստղերուն մէջ կը կարգաւ այն ծամ-

բան զոր ցոյց կուտայ Աստուծոյ մատը :

Լ. Կ. Թէւ. — Ի՛նչ կ'ըսէք, միլիւրտ իրաւունք չունի : Նաւուղիդ անօգուտ չէ :

Պ. Պետֆ. — Երևակայութիւն կամ խենթութիւն, միևնոյն բանն է: Դուռ բանի մը չես ծառայող, և այդ խենթութիւնը գաղափարներովն է որ այդպէս անօգուտ մարդ մը եղած ես: Բաւական բան իմացած եմ վրայ... Շիտակը ըսելով...

Լ. Թեւ. — Միջրոտ, լիմ բարեկամս է Ձեթըրթը, շատ շնորհակալ կ'ըլլամ եթէ փափկութեամբ վարուիք չեստ:

Պ. Պետֆ. — Ա՛, ձորձ, դուն զինքը սիրողներէն ես. ուրեմն զո՛հ պիտի ըլլաս, որոշած եմ օգնել քու պաշտպանեալիդ, Հակոբակ Պէշլի երևան Հանած բաներուն: Ձեթըրթն չի գիտեր որ իր ձեռագրի վարպետորդութիւնները մէջտեղ ելած են. բայց շատ մեծ լաջեցար մը չէ՝ կը ներեմ իրեն: Իր խաղը երեւան Հանող դրուածքը շատ լաւ դարձուած բան մըն է: Եւ ահա չեստ եմ բերեր, որ կարգաս ու խելքդ զըլուէր ժողովս (յրազիր մը կը Հանէ կուտէ) Հետն ալ եամակ մը դրած եմ ուր պիտի գտնես իմ առաջարկութիւնս: Խաբին Հարիւր ոսկի ունի շահիլու, կը յուսամ որ չՀանելիք չես ըներ: Ի՜նչ է, վերջապէս Հայրդ թագաւորին եղբայրը չէր և շիտակն ըսելով, քեզի առաջարկածէս ուրիշ բանի ալ չես ի գար. սկզբնաւորութիւն մըն է սա. միշտ քուս կ'ըլլայ և մօտէն կը հսկեմ վրայ, (Քիթթի Պէշ գուշակելով անոր վարանուք, նայուածքովը կը պահատի Ձեթըրթին որ շնորհէ):

Չեթ. (Կը վարանի վարեան մը. յետոյ, Քիթթի Պէշին նայելէ ետքը). — Կ'ընդունիմ՝ ինչ ալ ըլլա՛, միջրոտ:

Լ. Թեւ. — Ի՜նչ բարի է միջրոտը:

Ճ. Պէշ. — Առաջին թօսը ձեզի պիտի ուղղեմ, միջրոտ:

Ք. Պէշ. — (Իր աղջկանը). — Գնա՛ ձեռքը Համբուրն, աղջիկս:

Քանչ. — (Չեթըրթն ձեռքը սեղմելով). — Ապրիլ, բարեկամս. քաջ եղար:

Լ. Թեւ. — Թո՛ւմ քուզէնս վրան դրած յոյսս պարապը չհանց: — Ե՛հ, ըրի ըրի, վերջապէս զինքը ետահանեցիստը Հատուցի:

Պ. Պետֆ. — Զօն Պէշ, մեծարգոյ պարոն Պէշ, երթանք ընթերի, սա խենթերուն սեղան նստիլը կ'ուզեմ տեսնել: — Մարդ կ'երկոտասարդանայ իրենց վրայ նայելով:

Լ. Թեւ. — Ամէնքն ալ պիտի շտկուին. նոյն իսկ Քուէյքըն ալ—Ձեր շնորհիւ կամ իմ շնորհիւ, ահա Չեթըրթին գործը կարգադրուեցաւ. ալ Համաձեռք այդ մասին:

Ճ. Պէշ. — Ամէնքս մէկտեղ առաջնորդե՛ք միջրոտը դէպ ի ճաշարարը: (Քիթթի Պէշին) Քիչ մը ետքը եկուր Հիւրերը պատուասիրելու: (Քիթթի Պէշ իր սենեակը կ'ուղղուի):

Չեթ. — (Քուէյքըրին) Բոլոր ուզածնիդ ըրի, այնպէս չէ՛: (Բարձրաձայն, Պ. Պէշֆըրթին) Միջրոտ, քիչ մը ետքը կուգամ ձեզ կը գտնեմ: Բոպէ մը տուէք ինծի, քանի մը թուղթեր ունիմ այրելու:

Պ. Պետֆ. — Աղէկ, աղէկ... բանաստեղծութենէ բոլորովին կը բուժուի կոր... Աղէկ: (Դուրս կ'ելլին):

Ճ. Պէշ. — (Յանկարծ իր կնոջը մօտը կուգալ). Ինչո՞ւ չես մտներ սենեակդ: Ու մի՛ մոռնար որ կը սպասեմ քեզի:

(Քիթթի Պէշ պահ մը կանգ կ'առնէ դրան առջև և մտառանջ Չեթըրթնին կը նայի):

Ք. Պէշ. — (Մեկուտի). — Ինչո՞ւ կ'ուզէ միևնաջ մնալ, Աստուած իմ:

(Կը մտնէ սենեակը երկու գաւակներուն Հետ):

S T U V X Y Z:

(Ձեթըրթըն. միևնաջ, վեր վար պտռեցով)

— Ե՛, բարի բարեկամներ... Ձարմանալի է որ բաղդս այսպէս յանկարծ կը փոխուի: Հաւատալս չի գար կոր. բայց երևութիւն նայելով՝ անաւարակուելի է: — Սակայն ի՜նչ ըսել ուզեց՝ վարպետորդութիւններու խօսքն ընելով: Ա՛, ան ըլլալու է ինչ որ ամէնքը կ'ընեն (ինչ որ ես իսկ խառնովանած է՛ր արդէն) թէև զրբիս բուն Հեղինակը ես եմ: Ահա խորամանկութիւն մը որ շատ պարզուկ է, կ'ընդունիմ. — Ի՜նչ պաշտօն է արեօք առաջարկածը: Թերևս զրազիրի պաշտօն մը: Ի՜նչ կ'ըլլայ. պատուաւոր դործ մըն է: Կարող պիտի ըլլամ ապրուստս ճարել՝ առանց ստիպուելու Հոյն Համբը Հաւանակ բաներ զրբի: — Քուէյքըրին Հոյն, զոր խօսիցիք, պիտի Հանդարտի նորէն. ու Քիթթի Պէշին մահուան պատճառ պիտի չըլլամ... եթէ իրաւ է որ ես կրնայի՛ Էնոր մահուան պատճառ ըլլալ: — Կրնամ՝ Հաւատալ ատոր: Կը տարակուսիմ: Ինչ որ մարդ այդպէս ծածուկ կը պահէ՛ ուժեղ զգացում մը չի կրնար ըլլալ. մայրական Հոյն մը ունենալու է, քանի որ այդքան սիրալիլ կ'երեւայ: Հոգ չէ՛. այսպէս աւելի լաւ է. այլևս երեսը չպիտի տեսնեմ... Որոշուած բան է... Բայց Թերևս լաւագոյն էր որ սպաննել ինքզինքս: Դիակ մը ծածուկ պահել՝ դիւրին է: Մահը Էնոր չպիտի իմացնէր այդ բանը: Քուէյքըրը բոլոր պէտք

եղածը պիտի ընէր որպէսզի էնիկա չիմանայ: — Եւ հիմա, ինչու ապրիմ: Որ՞նչ համար ապրիմ... Պէտք է ապրիմ, որպէսզի քիթթին ապրի. բաւական է այլ:

Է՛, կանգ առէք, սև՛ դադափարոնք մի՛ գաք հորէն...

Կարդանք սա յօդուածը՝

(Լրագիրը, զոր Պ. Պէքֆորտ տուած էր իրեն, կը կարդայ):

«Ձեթըրթըն ինքն իսկ չէ իր գործերուն բուն հեղինակը. Ասիկա բոլորովին ազատացուած բան մըն է՛: Այդ սքանչելի քերթուածները ճշմարտագէտ Լաուչէ անուն վանականի մը ձեռքէն ելած են, և ան ալ զանոնք թարգմանած է թիւրիօ անուն տառաւորող դարուն ապրած վանականի մը գրածէն: Այս խաբեբայութիւնը, որ դպրոցականի մը ներքի է, դպրոցէն ելած մարդու մը մարդու համար՝ ո՞նի մըն է...» — Յօդուածագրին անունն է Պէյլ: Պէյլ ինչ է, ո՞վ է այս Պէյլը: Ինչ ըրեր եմ իրեն ի՞նչ կոչաւոցէ կ'ըլլէ այս օճք:

Ի՛նչ... ուրեմն անունս սեքսոմ, փառքս մարած, պատիւս կորսուած է... Ահա՛ դատաւոր:

Տեսնե՛ք բարերարը... Նայինք ինչ է առաջարկածը՝

(Նամակը կը բանայ, կը կարդայ, և կը պոռայ՝ զայլովթով)

Սենեկապան ծառայի պաշտօն մը իր տան մէջ...

Ա՛խ, անեծուած երկիր, արհամարհանքի աշխարհ, կործանին...

(Լիփիոնի սրտակը ձեռքն առնելով) Ո՛վ իմ հոգիս, քեզ ծախեր էի... ահա ասով քեզ կ'ազատեմ հորէն...

(Իր խմբ ասիւնը)

Սըրիւնէրին դրամը պիտի վճարուի: — Հիմա ազատ եմ ամենէն. հաւասար եմ ամենուն: Մ'չ, ասիկա հանգիստի տուաջին ժամն է որ կը ճաշակեմ կեանքիս մէջ: Ո՛վ իմ վերջին ժամս, ո՞վ արշալոյս յաւիտենական օրուան, կ'ողջունեմ քեզ: — Մ'նաք բարով, եռաստացումներ, աստելութիւններ, հեգնութիւններ, ստորնացուցիչ աշխատանքներ, անասուգութիւն, անձկութիւն, թշուառութիւն, սրտի չարաբանք, մնաք բարով Ա՛խ, ինչ երջանկութիւն, մնաք բարով կ'ըսեմ ձեռքի: — Եթէ գիտնային, եթէ գիտնային թէ որքան երջանիկ եմ հիմա... ոչ մէկը այսքան երկայն պիտի չվարանէր...

(Ամբիփման վայրկեանէ մը յետոյ, որու մի-

ջոցին իր դէմքը երանութեան արտայայտութիւն մը կ'ստանայ, ձեռքերը կը միացնեն և կը շարունակէ)

Ո՛վ մահ, ազատարար հրեշտակ, ինչ քաղցր է քու խաղաղութիւնդ: Իրաւունք ունէի քեզ պաշտելու, բայց մինչև ցարդ ուժը չունէի քեզի սիրաւնալու: Գիտեմ որ քու բայերդ յամբ ու ապահով պիտի ըլլան: Տես, ո՞վ ծանաղեմ հրեշտակ, տես ինչպէս ամենաւն աչքէն պիտի ջնջեմ քայլերուս հետքը այս աշխարհիս վրայ:

(Կրակը կը նետէ իր բոլոր թղթերը) Գացէ՛ք, ազնիւ մտածումներ՝ այդ բոլոր արհամարտող ապերախտեան համար դուած, գաղթք բոցին մէջ մարտեցէ՛ք և ինձի հետ երկինք բարձրացէ՛ք:

(Աքերը երկինք կը բարձրացնեն և կամայ կամաց կը պատուէ իր քերթուածները, ծանր ու յափըշտակեալ ձևով մարդու մը որ հանդիսաւոր զոհակատարութիւն մը կ'ընէ):

Տ Ե Ս Ս Ը Ն Ն Ը:

Զեքրթըրն, Բիթթի Պիշ

(Բիթթի Պէյլ յամբաբայ զուրս կ'ըլլէ իր սենեակէն, կանգ կ'առնէ, կը դիտէ Ձեթըրթընը, և կ'երթայ կը կենալ շրմինէին և անոր միջև: Ձեթըրթըն յանկարծ կը զարթոցնէ թերթերը պատուելը)

Ք. Պէլ (Մեկուտ). — Ի՛նչ կ'ընէ... Երբէք պիտի չհամարձակեմ իրեն հետ խօսիլ: Ի՛նչ կ'այրէ: Այդ բոցը սիրտս դող կը հանէ, ու կրակէն լուսաւորուած դէմքը ահաւոր արտայայտութիւն մը ունի (Ձեթըրթընին)

Ինչու չէք երթար միւրտիւն ըով:

Ձեթը. — (Թղթերը ձեռքէն վար կը ձգէ՛ ամբողջ մարմնովը կը դողայ). — Որդէն... Դուք էք... Ա՛խ, տիկին, ծուկի եկած կը պաղատիմ... մոռցէք զիս:

Ք. Պէլ. — Աստուած իմ, բայց ինչու ինչ էք ըրած.

Ձեթը. — Պիտի մեկնիմ: — Մ'նաք բարով: — Հաւատացէ՛ք, տիկին, պէտք չէ որ կիները խաբուին մենէ: Բանաստեղծներու սէրը հազիւ թէ գոյութիւն ունի: Պատշտ չէ սէր անոնց, ոչինչ կը սիրեն անոնք. եսականներ են, ամենքն ալ: Ուղեղը կը սնանի ի միտս սրտին: Երբէք մի՛ կարդաք անոնց գրածները և մի՛ տեսնէք զանոնք երբէք: Ես անոնց ամենէն գէշը եղայ:

Ք. Պէլ. — Առտուած իմ, ինչու «եղայ» կ'ըսէք:

Ձեկը. — Որովհետև ինչ չեմ ուզեր բանաստեղծ ըլլալ. կը ահանեք, բոլոր գրածներս պատուեցի: — Ուսկից ետքը ըլլալիս ալ լաւագոյն բան մը չէ, բայց ձկ գիտես: Մ'աք բարով: Մտիկ ըլնէք. զմայելի ընտանիք մը ունիք, ձեր զաւակները կը սիրենք, այնպէս չէ:

Ք. Պէլ. — Կհանքէս աւելի:

Ձեկը. — Սիրեցէք ձեր կեանքը՝ անոնց համար որոնց դուք էք կեանք տուած:

Ք. Պէլ. — Աւանդ, արդէն միայն անոնց համար է որ կեանքը կը սիրեմ:

Ձեկը. — Եւ ի՞նչ կայ աշխարհիս մէջ աւելի գեղեցիկ, ի՞նչ Քիթթի Պէլ: Այդ հրեշտակները ծուռկալ՝ ներուզ վրայ, դուք աստուածային գիւղիկներ կը նմանիք:

Ք. Պէլ. — Օր մը անոնք պիտի բաժնուին ինձմէ...

Ձեկը. — Ոչինչ կը հաւատարի ատոր: Այդ է միակ ճշմարտութիւնը՝ կեանքի մէջ: Ա՜յն սէր մը անխռով է աներկիւղ: Անոնց մէջ է ձեր արիւնին արիւնը, ձեր հոգիին հոգին. ամէն բանէ աւելի ու միմիայն զանոնք սիրեցէք, տիկին: Խոստացէք ինձի որ այսպէս պիտի ընէք:

Ք. Պէլ. — Աստուած իմ, աշուրներկի արցունքով լեցուն են, ու կը ժպտնան...

Ձեկը. — Երանի՜ թէ ձեր ազուրդ աչքերը երբեք չլան է ձեր շրթունքները միշտ ժպտին: Քիթթի, մի՛ թողուք որ ձեր խաղաղ ընտանիքին հոգերէն դուրս ու է ցաւ ձեր սիրտը մտնէ:

Ք. Պէլ. — Աւանդ, միթէ մեր ձեռքն է ստիկա: Ձեկը. — Այո՛, այո՛: Գաղափարներ կան որոնց մով կարելի է սիրտը դրոշմ: Քուէշքընէ ինքեցէք, ան կուտայ ձեզի այդ գաղափարները: Ես ատեն չուսիմ. ձեցեցէք երթամ: (Դէպ ի իր սենեակը կ'ուզ՝ դուրս Է)

Ք. Պէլ. — Ա՛յն, լայտնի է որ կը ստառապնէ...

Ձեկը. — Ընդհակառակը. բոշկուած եմ: Միայն թէ զո՛ւս... տաքութիւն ունիմ... Ա՜յ, բարութիւն, բարութիւն, դուն աւելի կը ցաշնես զիս քան անոնց բոլոր հոգիի սևութիւնը:

Ք. Պէլ. — Ի՜նչ բարութեան մասին կը խօսիք: Ձեր բարութեան:

Ձեկը. — Կիները իրենց բարութեանը զո՛ւ կ'երթան: Ձեր բարութիւնն է պատճառ որ այստեղ եկաք դուք: Ձեզի կը սպասեն այնտեղ. վստահ եմ: Ի՜նչ կ'ընէք հոս:

Ք. Պէլ. (Խորապէս յուզուած, և նայուածքը

մայրուն) . — Հիմա, եթէ ամբողջ աշխարհս ալ սպասէ ինձի, այստեղ պիտի մնամ:

Ձեկը. — Կ'աղաչեմ, ձեցեցէք երթամ վայրկեան մը...: Քիչ մը ետքը կուգամ նորէն կը գտնեմ ձեզ: Մ'անք բարով: Մ'աք բարով:

Ք. Պէլ. (Կեցնելով գայի) . — Ել չըպիտի դաք...

Ձեկը. — Պէտք է երթնամ. պէտք է երթնամ:

Ք. Պէլ. — Օ՛հ, չէք ուզեր գալ...

Ձեկը. — Տիկին, այս տունը ձերն է, բայց այս վայրկեանը իմն է:

Ք. Պէլ. — Ի՜նչ կ'ուզէք ընել:

Ձեկը. — Ձեցեցէք զիս, Քիթթի: Մարդիկ ունին ըստէնք ուր ալ ևս չեն կրնար կենեռուն հասակին խոնարհիլ և էնոնց համար ձայներին մեղմացնել... Քիթթի Պէլ. ձեցեցէք զիս:

Ք. Պէլ. — Երբէք երջանիկ պիտի չըլլամ եթէ ձեզ ձգեմ այսպէս:

Ձեկը. — Իմ պատիժս էք դուք արդեօք: Ո՞ր չար ոգին ձեզ ինձի կը դրկէ:

Ք. Պէլ. — Անբացատրելի սարսափ մը:

Ձեկը. — Եթէ մնաք հոս՝ այն ատեն է որ պիտի սարսափիք:

Ք. Պէլ. — Տէր Աստուած... չար մտքեր ունիք ուրեմն...

Ձեկը. — Բաւական չէ ինչ որ ըսի... Բ՛նչպէս կ'ըլլայ որ դուք հոս էք:

Ք. Պէլ. — Եւ ի՞նչպէս ալ ևս հոս չըլլայի:

Ձեկը. — Վասն զի կը սիրեմ ձեզ, Քիթթի:

Ք. Պէլ. — Ա՛յն, պարտն, եթէ ատիկա ինձի կ'ընէք, ուրեմն կ'ուզէք մեռնիլ:

Ձեկը. — Իրաւունք ունիմ մեռնելու: Կ'երգեմու՞մ ձեր առջև, և պիտի հաստատեմ Աստուծոյ առջև, թէ իրաւունք ունիմ:

Ք. Պէլ. — Եւ ես, կ'երգեմու՞մ որ ոճիւր մըն է ատ. մի՛ գործէք այդ ոճիւրը:

Ձեկը. — Պէտք է, Քիթթի. դատապարտուած եմ ես:

Ք. Պէլ. — Մէկ օր մը, զո՛ւն մէկ օր մը ըսպասեցէք՝ ձեր հոգիին ազատութիւն մտածելու համար:

Ձեկը. — Բան մը չկայ որուն մտածած չըլլամ, Քիթթի:

Ք. Պէլ. — Մէկ ժամ զո՛ւն, ազօթելու համար: Ձեկը. — Ա՛յ չեմ կրնար ազօթել:

Ք. Պէլ. — Ուրեմն իմ սիրտս համար, կ'աղաչեմ: Ես կը մեռնիմ, եթէ այդ բանն ընէք:

Ձեկը. — Ըսի՜ ձեզի... ալ ոչնչ:

Ք. Պէլ. — Բայց եթէ ես ալ կը սիրեմ ձեզի:

Չէ՛ր. — Զգացի ատիկա, և ատոր համար է որ ազէկ ըրի մեռնիլ որոշելով: Ատոր համար է որ Աստուած կրնայ ներել ինծի:

Բ. ՊԵԼ. — Ի՛նչ ըրիք ուրեմն...

Չէ՛ր. — Ել ուշ է, Քիթթի: Մեռել մըն է որ կը խօսի ձեզի:

Բ. ՊԵԼ. (Մռնակի կ'իյնայ, ձեռքերը երկինք բարձրացնելով). — Նրկիսու՛ր թագաւոր, խնայէ իրեն:

Չէ՛ր. — Գացէք, գացէք... Մնա՛ք բարով:

Բ. ՊԵԼ. (Չկրնալով ոտքի ելլել) Ա՛յ չեմ կրնար երթալ...

Չէ՛ր. — Ուրեմն... ազօթէ ինծի համար՝ աշխարհիս վրայ և երկրքին մէջ:

(Էտոր ձակտէն կը համբուրէ և զողջելով սանդուղէն վեր կ'ելլէ. իր սենեակին դուռը կը բանայ և ներս կը նետուի):

Բ. ՊԵԼ. (Բիկնոնի սրուակը կը գտէ) Աստուած իմ... ի՛նչ է աս... Աստուած, ներէ իրեն...

Տ Յ Ս Ա Ր Ա Ն Թ.

Քիթթի Պէլ. Քուէյթըը

Բ. ՊԵԼ. (Ազակով) — Ո՛ւր էք... Ի՛նչ կ'ընէք չոս...

Բ. ՊԵԼ. (Սանդուղին ոտքերուն վրայ ինկած). — Հոն գացէք, պարոն, շոտ, գացէք. պիտի մեռնի... ազատեցէք զինքը... Եթէ ուշ չէ արդէն: (Մինչդեռ Քուէյթըըրը դէպ ի սանդուղը կ'ուղղուի, Քիթթի Պէլ, ապակեւոր դռներէն կը նայի, տեսնելու համար թէ չկայ մէկը որ օգնութեան կառնանք հասնի. յետոյ մէկը չտեսնելով, Քուէյթըըրին ետևէն կ'երթայ սարսափաւոր, Չէթըրթընի սենեակէն եկած ձայները մտիկ ընելով):

Բ. ՊԵԼ. (Մեծաբայլ վեր ելլելով, Քիթթի Պէլին) — Կեցի՛ր, կեցի՛ր չոտ, աղջիկ: Մի՛ գար Հետս: (Կը մտնէ Չէթըրթընի սենեակը և դուռը կը դրցէ ետևէն: Տարտամ կը լսուի Չէթըրթընի հառաչները և Քուէյթըըրին խրախուսական խօսքերը. Քիթթի Պէլ վեր կ'ելլէ, կէս-մայրած, իւրաքանչիւր ոտքի բարամբունքին կրթնելով, ձիգ մը կ'ընէ գուռը բանալու համար. վերջապէս կը բացուի դուռը. կը տեսնուի Չէթըրթըն հոգեվաբ, Քուէյթըըրին թևին վրայ ինկած: Քիթթի Պէլ ձիգ մը կ'արձակէ, կը սաչի՝ կէս-մեռած՝ բարամբունքին փրայէն, և սանդուղին վերջին աստիճանին վրայ կ'իյնայ: Մօտակայ սրահէն չոս Պէլի ձայնը կը լսուի.)

Ճ. ՊԵԼ. — Տիկին Պէլ:

(Քիթթի Պէլ յանկարծ ոտքի կ'ելլէ՝ կարծես զսպանակէ մը մղուած):

Ճ. ՊԵԼ. (Նրկորդ անգամ) — Տիկին Պէլ:

(Քիթթի Պէլ կը սկսի քաշել, և կուգայ կը նստի, Աստուածաշուշը կը բանայ կը կարգայ և ցած ձայնով բառեր կ'արտասանէ որոնք չեն լսուիր: Երկու զաւակները կը վազեն և շրջադղեւորն կը կառչին):

Բ. ՊԵԼ. (Սանդուղին վերէն Քիթթիին նայելով). — Տեսաւ արդե՞ք... անոր մեռնիլը տեսաւ արդե՞ք... (Կ'իջնէ վար, կուգայ Քիթթիին մօտ) Աղջիկս, աղջիկս:

Ճ. ՊԵԼ. (Կոպտաբար ներս մտնելով և սանդուղին երկու ոտք վեր ելլելով) — Ի՛նչ կ'ընէ կինս հոս: Ո՛ւր է այդ երիտասարդը: Կ'ուզեմ՝ որ այդ պարոնը անմիջապէս դուրս հանեն տունէս:

Ք. ՊԵԼ. — Ըսէ՛ք՝ « անոր մարմինը » դուրս հանեն... մեռաւ:

Ճ. ՊԵԼ. — Մեռաւ:

Բ. ՊԵԼ. — Այո՛, մեռաւ՝ տանընտը տարեկան Գուր ամենքդ անքան լաւ վարուեցաք Հետը... ու կը զարմանաք որ մեկած ըլլայ:

Ճ. ՊԵԼ. — Բանջ...

Ք. ՊԵԼ. — Լուեցէք, պարոն. կին մը չի կրնար զիմանալ այդքան սարսափի...

(Կը նայի Քիթթիին, և կը տեսնէ որ հոգեվաբ է)

Պարոն, ներս տարէք զաւակները: Թող չտեսնեն...

(Տղաքը կ'առնէ մօրերնուն վրայէն, կուտայ չոս Պէլին, և անոց մայրը թևերուն մէջ կ'առնէ: Չոս Պէլ զաւակները քիչ մը Հետուն կը տանի և կը մնայ ապշած: Քիթթի Պէլ կը մեռնի Քուէյթըըրին թևերուն մեջ):

Ճ. ՊԵԼ. (Ահաբեկած) — Քիթթի, Քիթթի, ի՛նչ ունի: (Կը լսէ, տեսնելով որ Քուէյթըըրը ծուռ կը շրքի):

Ք. ՊԵԼ. (Մռնակ եկած) Քու ծոցդ, ո՛վ Տեր, քու ծոցդ ընդունէ այս երկու նոցատակները:

(Քուէյթըըրը կը մնայ ծնրաղիւր, աչքերը երկնք վերցուցած, մինչև որ վարագույրը վար կ'իջնէ):

Վ Ս Բ Զ

Թարգմ. Ա. 2.